Azg
armenian daily

20 ՅՈՒՆԻՍ 2001 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 113 (2317)

Ալիեւը աղավինում է Մեծ Բրիտանիային

ԲԱՔՈՒ, 19 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Բաքվի «Թուրան» գործակալության հաղորդման համաձայն, հունիսի 18-ին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը ուղերձ է հղել Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերին: Համաձայն հաղորդման, ուղերձում մասնավորապես ասվում է. «Ադրբեջանի նավթային նոր ստրատեգիան երկրի ինքնիշխանության եւ տնտեսական հզորության ամրապնդման պայմաններում լայն հնարավորություններ է բացում Կասպյան տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հասնելու համար»:

«Ադրբեջանը Մեծ Բրիտանիայի աջակցության հույսն ունի հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման գործում, ինչպես նաեւ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Ադրբեջանի անդամագրության գործում», ասվում է Ալիեւի ուղերձում:

Ուղերձի վերջում Ալիեւը հույս է հայտնում, որ ստրատեգիական գործընկերության, բարեկամության եւ համագործակցության հարաբերությունները Ադրբեջանի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ կբարձրանան որակական նոր մակարդակի Մեծ Բրիտանիայի վարչապետի պաշտոնում Թոնի Բլերի գտնվելու նոր ժամկետի ընթացքում:

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ

Այցագրային կարգը կարելի է վերացնել

Եթե տնտեսական հարաբերակցությունը հավասար լինի

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Թեհրան-Երեւան

Այն ժամանակից, երբ ԼՂ հակամարտության կարգավորման համաստեղությունում սկսեց դիտվել Լաչինը Մեղրիով փոխանակելու տարբերակը, պաշտոնական Թեհրանը, մեր տեղեկություններով, արդեն երեք անգամ դիմել է Երեւանին՝ հայ-իրանական սահմանային հատվածը երկու երկրների միջեւ առավել թափանցիկ դարձնելու, այցագրային կարգը դյուրացնելու, ընդհուպ այցագրերը վերացնելու առաջարկով: Պաշտոնական Երեւանը որեւէ պատասխան չի տվել, ինչը դիվանագիտական պրակտիկայում նշանակում է առաջարկության մերժում: Միեւնույն ժամանակ, հայկական եւ իրանական կողմերի համատեղ ջանքերով փորձ է արվում առավել բարձր մակարդակի հասցնել երկու երկրների տնտեսական հարաբերությունները, արդեն վերաբացվել է Մեղրու սահմանային շուկան, նախատեսվում է Արաքսի վրա կառուցել հայ-իրանական ՀԷԿ, Իրան-Հայաստան գազատարի կառուցումը կարծես թե այլեւս կասկած չի հարուցում, իրանական կողմը շարունակում է կարեւորել Քաջարանի թունելի կառուցումը:



Վերջին օրերին Մեղրին պահանջելու «խնդրանքով» երկու անգամ Թուրքիան հայտարարություն է արել: Նախ, վարչապետ Էջեւիթը հայ-թուրքական հարաբերությունների հաստատման հնարավորությունը պայմանավորեց Հայաստանի՝ Ադրբեջան-Նախիջեւան անխափան հաղորդակցություն տրամադրելու նախապայմանով, ապա Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Թեզջանը հայտարարեց, թե «Նախիջեւանը պետք է ցամաքով միավորվի Ադրբեջանի մնացած տարածքի հետ»:

Տես էջ 12

ԱՅՍՕՐ

Քրիստոնեության 1700-ամյակը Բեռլինի Մայր տաճարում

Հունիսի 20-ին Բեռլինի Մայր տաճարում (Berliner Dom), ժամը 18.00-ին սկսվող էկումենիկ ժամերգությամբ հանդիսավորությամբ կնշվի Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունման 1700-ամյակը: Տոնական միջոցառումը, որը հովանավորվում է ԳԴՀ նախագահ Յոհաննես Ռաուի եւ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից, կազմակերպել են ԳԴՀ-ում ՀՀ դեսպանությունը եւ գերմանահայոց առաջնորդարանը: Ժամերգությանը քարոզով ներկաներին կդիմի գերմանահայոց առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեկջյանը: Ժամը 19.00-ին ԳԴՀ-ում ՀՀ դեսպան Աշոտ Ոսկանյանի ելույթով կսկսվի միջոցառման հանդիսավոր մասը, որի ընթացքում խոսք կասեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գերմանիայի հանձնախմբի նախագահ Քլաուս Հյուֆները, կաթոլիկ եկեղեցու Բեռլինի արքեպիսկոպոսարանի եպիսկոպոս Վոլֆգանգ Հայդերը, Բեռլին-Բրանդենբուրգի ավետարանական եկեղեցու եպիսկոպոս Վոլֆգանգ Հյուբերը, դպրի ուղղափառ եկեղեցու եպիսկոպոս Անբա Դամիանը, Սախսոնիա-Անհալտի մշակույթի նախարարության պետքարտուղար Վոլֆգանգ Այշլերը, ԳԴՀ պետնախարար Քրիստոֆ Ցյոպելը, Բունդեսթագի խմբակցության նախագահ Գերտ Վայսֆիրխեն, ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Գագիկ Ասլանյանը: Երաժշտական բաժինը կներկայացնեն Մայնի Ֆրանկֆուրտում բնակվող խաչատրյան ընտանիքը (ջութակ, դաշնամուր) եւ Տրիրի օպերային թատրոնի երգիչ Գոռ Արսենյանը (տենոր): 20.15-ին կսկսվի ընդունելությունը: Ըստ ՀՀ դեսպանության տվյալների, Մայր տաճարում անցկացվելիք տոնակատարությունը խիստ մարդաշատ է լինելու: 450 հրավիրյալներ՝ պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, Բունդեսթագի պատգամավորներ, հայ համայնքի ակտիվ անդամներ մասնակցելու հայտ արդեն ներկայացրել են:

Ան. Հ.
Գերմանիա

«ՄԱՄՈՒԼԻ ԴԵՐԸ»

Այսօր հայ լրագրողների խումբը մեկնում է Բաքու

Երեւանի մամուլի ակումբի եւ Բաքվի «Ենի Նեսիլ» լրագրողների միության կազմակերպած համատեղ ծրագրի շրջանակներում այսօր Բաքու են մեկնում վեց հայ լրագրողներ: Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը տեղեկացրեց, որ հունիսի 20-23-ը Ադրբեջանի մայրաքաղաքում, ապա հունիսի 23-26-ը Թուրքիայի Անկարա եւ Ստամբուլ քաղաքներում հայ լրագրողներին կմիանան վեցական ադրբեջանցի եւ թուրք լրագրողներ՝ մասնակցելու «Մամուլի դերը երեք երկրների հարաբերությունների մերձեցման գործում» թեմայով քննարկումներին:

Նույն կազմով (վեցական հայ, ադրբեջանցի եւ թուրք լրագրողներ) հաջորդ հանդիպումը, որը ծրագրի շարունակությունն է, տեղի կունենա Երեւանում: Չեն բացառվում Հայաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի բարձրաստիճան պետական պաշտոնյաների եւ քաղաքական գործիչների հետ լրագրողների հանդիպումները:

Հայ լրագրողների խմբում ընդգրկված են հանրային հեռուստատեսության եւ ռադիոյի խորհրդի անդամ Վալերի Այդինյանը, «Պրոմեթեւս» հեռուստաընկերության «Լրաբեր» ծրագրի տնօրեն Արամ Սաֆարյանը, Արմենպրեսի մեկնաբան Աշոտ Սողոմոնյանը, «Գոլոս Արմենիի» օրաթերթի թղթակից Մարինա Գրիգորյանը եւ «Ազգ» օրաթերթի թղթակից Թաթուլ Հակոբյանը: Խումբը գլխավորում է Բորիս Նավասարդյանը:

Նախապատրաստվում է Պուտինի այցը Հայաստան

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեկ ընդունել է Հայաստանում Ռուսաստանյան Դաշնության դեսպան Անատոլի Դյուկովին: Ինչպես հաղորդում է ՀՀ նախագահի մամլո գրասենյակը, նախագահը եւ դեսպանը քննարկել են ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Հայաստան առաջիկա պաշտոնական այցի հետ կապված հարցեր: Նրանք անդրադարձել են նաեւ երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարին եւ հատկապես մեծ ուշադրություն են հատկացրել տնտեսական գործակցությանը: Երկուստեք նշվել է միջկառավարական տնտեսական հանձնաժողովների գործունեությունն ակտիվացնելու անհրաժեշտությունը:

Թուրքիայում ավտովթարից զոհվել է Լ. Տեր-Պետրոսյանի զարմիկը

ԵՐԵՎԱՆ, 19 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեկ Թուրքիայում ավտովթարից զոհվել է Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի զարմիկ Աղասի Տեր-Պետրոսյանը: Թուրքական «Միլիեթ» թերթը հաղորդում է, որ նա Թուրքիա էր ժամանել կաշի գնելու: Ա. Տեր-Պետրոսյանը սեփական մեքենայով Ստամբուլից ուղեւորվել է Իզմիր քրոջ՝ Ֆիդան Սուսլուի, նրա ամուսնու՝ Աբդուլա Սուսլուի եւ վարորդ Մուսաֆա Գիրգինի հետ: Ճանապարհին, փողոցի հակառակ կողմից, ուր նա անցել էր գնումներ կատարելու նպատակով, դեպի մեքենա վերադարձող Ա. Տեր-Պետրոսյանին վրաերթի է ենթարկել դիմացից եկող մեքենան: Նա զոհվել է դեպքի վայրում: Ըստ թերթի, Ա.Տեր-Պետրոսյանի դին այսօր «Թուրքական ավիաուղիների» ինքնաթիռով տեղափոխվելու է Հայաստան:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Ռուսական թերթը ենթադրում է իրավիճակային փոփոխություններ Հարավային Կովկասում

ՄՈՍԿՎԱ, 19 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ըստ ռուսաստանյան «Նովիե իզվեստիա» թերթի, օրերս տեղի ունեցած երկու իրադարձություն կարող են նկատելի դարձնել Հարավային Կովկասում իրավիճակի իրական փոփոխությունների հեռանկարը: Առաջինը՝ ադրբեջանա-ռուսական համաձայնագիրն է հյուսիս-հարավ փոխադրամիջանցքի շրջանակում Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Իրանի երկաթուղիների միավորման մասին: Այդ խոշորագույն անդրսարածաշրջանային տարանցիկ ուղեգիծը, ինչպես հայտնի է, ենթադրում է Պարսից ծոցի, Հարավային Ասիայի եւ Միջին Արեւելքի պետություններից Ռուսաստանի տարածքով բեռների փոխադրում կենտրոնական եվրոպայի եւ Սկանդինավիայի երկրներ: Ռուսաստանի կողմից Իրանի հետ երկաթուղային հաղորդակցման համար որպես կապող օղակ Ադրբեջանին նախապատվություն տալն ըստ էության նշանակում է, որ Ռուսաստանը հրաժարվում է Հայաստանին դուրս բերել «գեոստրատեգիական գերությունից», գրում է թերթը:

Նշված իրադարձություններից երկրորդը տեղի է ունեցել Թուրքիայում, եւ, ըստ թերթի, կարող է վկայել Մեծ Կովկասի աշխարհաքաղաքական տարածությունում նոր միտումի ծնվելու մասին: Նկատի է առնվում հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր նորմալացումը:

Անցյալ շաբաթ Թուրքիայի եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնում (ASAM) հայտարարվել է կառուցվածքային նոր ստորաբաժանման՝ Հայկական հետազոտությունների ինստիտուտի, ստեղծման մասին, որն զբաղվելու է Հայաստանի եւ հայկական հարցի ուսումնասիրմամբ: Այս նախաձեռնության պետական բնույթը, գրում է թերթը, ընդգծվել է բացման արարողությանը Թուրքիայի պետնախարարի ներկայությունը, ինչպես նաեւ պաշտոնաթող դեսպան Օմեր Լուտֆին նորաստեղծ ինստիտուտի տնօրեն նշանակելը:

ASAM-ի ղեկավար Յումիս Օզդաղը հայտարարել է, որ ինստիտուտի նպատակն է լինելու այն «անարդարացի հայկական պնդումների» գիտական հերքումների նախապատրաստումը, որոնք վերջին տարիներին Թուրքիայի համար սպառնալից բնույթ են ընդունել:

Ակներեւ է, նշում է «Նովիե իզվեստիան», որ հայագիտական ինստիտուտը կդառնա Հայաստանի վերաբերյալ Թուրքիայի կառավարության եւ արտգործնախարարության համար առաջարկություններ նախապատրաստող մարմին: Նման մարմնի հիմնադրումն ըստ էության նշանակում է, որ Թուրքիան արդեն իր համար ճշտել է Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը, ինչը, ըստ թերթի, պայմանավորված է մի շարք պատճառներով. ԱՄՆ-ի ճնշումն Անկարայի վրա, թուրք-ադրբեջանական հարաբերություններում նկատվող սառնությունը, խորը տնտեսական ճգնաժամը Թուրքիայում, որը երկրի իշխանություններին ստիպում է մտածել ոչ թե թվացյալ աշխարհաքաղաքական, այլ իրատեսական տնտեսական նախագծերի մասին:

ՊՐԱԿՏԻԿ

Հայաստանում անառաջացման դեմ պայքարն ընթանում է առայժմ սեմինարներում

Հունիսի 17-ն անապատացման դեմ պայքարի միջազգային օրն է

Դեռևս 1977-ին, աշխարհի ոչ մի երկիր չշրջանցող անառաջացման սպառնալիքի ընդարձակումը կանխելու նպատակով, ՄԱԿ-ի կոնֆերանսն ընդունեց անառաջացման դեմ պայքարի գործողությունների ծրագիր, որը հետագա տարիների ընթացքում ձեւափոխվելով ու կատարելագործվելով՝ ամբողջացավ 1994-ին հրատարակված ՄԱԿ-ի կոնվենցիայում: Հայաստանն այս կոնվենցիային միացել է 5 տարի առաջ, այդ ընթացքում անառաջացման դեմ պայքարին ուղղված վերոհիշյալ փաստաթուղթը վավերացրել է ԱԺ-ն, ընդունվել կառավարության որոշմամբ: Կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի պարտավորությունների իրագործողն ու պատասխանատուն դարձավ ՀՀ բնապահպանության նախարարությունը: Թե մինչ օրս անառաջացման դեմ պայքարի ուղղությամբ գործնականում ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվել, հանրությանը տեսանելի չեն: Վերջերս բավականին նորածեւ է դարձել մի պատճառաբանություն. ե՞րբ հարցնում ես, թե ինչո՞ւ այս կամ այն ոլորտում, չնայած պաշտոնյաների ծոխ ելույթներին, առաջընթաց չի նկատվում, անմիջապես պատասխանում են. «Մենք զբաղված ենք ռազմավարությունը մշակելով»: Ռազմավարությունը մշակում են, գեղեցիկ տեսքով ու բովանդակությամբ փաստաթղթեր կազմում եւ... վերջ: Օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով օրենքներն այդպես էլ չեն հասնում կիրառման փուլին, այդ տեսությունները, ցավոք, չափից դուրս գեղեցիկ են մեր տգեղ իրականության համար: Անշուշտ, կարելի է նույնպես նորածեւ դարձած «պոպուլիզմ» բառով մեղադրել վերոհիշյալ դասողություններն անողներին, այդ կերպ մտածողներին (իսկ այդպիսիք մեծամասնությունն են կազմում), սակայն իրականությունը չես փոխի՝ տվյալ դեպքում բնապահպանության ոլորտում լրիվ թափով շարունակվում են նույն հանցավոր գործընթացները, մասնավորապես՝ ապօրինի անտառհատումներն էլ են շարունակվում, Սեւանի մակարդակն էլ է իջնում, ջրային ու հանքային ռեսուրսներն էլ են անխնա վատնվում եւ այլն: Սրանից էլ պարզ թվաբանություն դժվար է պակտերացնել: Մշակվում է ռազմավարություն, թե չի մշակվում, այս գործընթացները շարունակվում են, եւ կորուստներն անդառնալի են...

Հենց տագնապի, մտահոգության ու սրացավության ոգին էր, որ թվաց, իսպառ բացակայում էր բնապահպանության նախարար Սուրադ Սուրադյանի, փոխնախարար Արտաշես Զիլոյանի, հողերի պահպանության վարչության պետ Աշոտ Վարդեւանյանի ելույթներում: Կցկտուր, անհիմն լավատեսությամբ տոգորված, էապես գրեթե ոչինչ չասող այդ ելույթները, որ զբաղեցրին Թեմեյան կենտրոնում տեղի ունեցող անառաջացման դեմ պայքարի ազգային ծրագրի ներկայացմանն ու քննարկմանը նվիրված մեկօրյա սեմինարի աշխատանքային առումով ամենաարդյունավետ առավոտյան ժամերը, ի սկզբանե նվազեցրին թե լրատվամիջոցների, թե այլ հրավիրյալների հետաքրքրությունը: Սեմինարի մթնոլորտը փոխվեց, աշխուժացավ միայն «պաշտոնական մասի» ավարտից հետո, երբ ելույթ ունեցան կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ էկոլոգիական ակադեմիայի թղթակից անդամ, Հայաստանում անառաջացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի նախագծի հեղինակ Սամվել Բալոյանը, Կանանչների միության նախագահ Հակոբ Սանասարյանը եւ այլք: Բնապահպանության նախկին փոխնախարար Ս. Բալոյանն իր պաշտոնանկությունից հետո շարունակում է ծրագրով զբաղվել որպես պատասխանատու խմբագիր, հեղինակի համար չափազանց անհասկանալի մի կարգավիճակ, որ թերեւս «հաշվի չեն առել» կադրային փոփոխություն իրականացնողները:

Ինչեւէ: Հայաստանում անառաջացման հիմնախնդիրները ՄԱԿ-ի շրջանակներում ի սկզբանե ներկայացրել է Ս. Բալոյանը: «Ազգի» հարցերին պատասխանելով՝ նա մասնավորապես տեղեկացրեց, որ սեմինարի կազմակերպումը ծառայելու է իր հեղինակած ծրագրում վերջին շտկումները կատարելուն, իսկ հետո ծրագիրը կներկայացվի կառավարության հաստատմանը: «Կաշխատի՞» ծրագիրը, թե՞ շատ այլ ծրագրերի պես կմնա սեղանին: Ս. Բալոյանի համոզմամբ՝ այս ծրագիրն անպայման «կաշխատի», քանի որ իրատեսական է ու մատչելի. «Ծրագիրը մշակված է այն սկզբունքներով, որ իրականացնողներից պահանջի «նվազագույնը»՝ բարի կամք, արհեստավարժություն ու պետական մտածողություն»: Հուսանք, ծրագրի իրականացման պատասխանատու պաշտոնյաները գործնականում կդրսեւորեն վերոհիշյալ 3 հատկությունները, հատկապես, եթե հաշվի առնենք, որ Հայաստանում անառաջացման դեմ պայքարին ուղղված ազգային այդ ծրագրի նախագիծը (ինչպես պարզվեց ունկնդրումից) իրոք հանգամանալից էր, կազմակերպված եւ իրատեսական:

ԱՆՈՒՇ ԴՈՎԼԱԹՅԱՆ

Ցաստիսներին զսպելու համար

Արմենտել՝ այսինքն հայկական հեռախոսակապ, որ գոյություն ունի շուրջ մեկ դար: Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանը ամենահեռախոսականացված հանրապետություններից էր: Այժմ նույնպես մենք ունենք բավական խիտ հեռախոսացանց: Եթե նախկինում այդ ցանցը գտնվում էր պետական տնօրինության տակ, մեր օրերում, սակայն, վաճառվել է արտասահմանյան մասնավոր կազմակերպության: Ճիշտ է արվել, թե սխալ, դժխոս չենք, բայց մեր մեջ միշ չեն զավզակները: Բոլոշեվիզմը վերջիններիս զսպելու միջոց է, եւ այդ առումով միանգամայն օգտակար քայլ է, եւ կարծում եմ դրան պիտի գնալ: Ճիշտ կլինի դրան գնալ ասիճանաբար եւ մտածված: Գտնում եմ, որ ամսական անվճար ժամանակահատվածը 120 րոպեի դիմաց առաջին 6 ամիսը կամ տարին նպատակահարմար կլինի սահմանել 150 րոպե, իսկ հետո իջեցնել 120 կամ նույնիսկ 100 րոպեի:



վարանում եմ գնահատել, որովհետեւ Արմենտելի հետ կնքած պայմանագիրն այդպես էլ չհրապարակվեց, եւ քչերը գիտեն բովանդակությունը: Միայն վերջին ժամանակներս տեղեկատվական զանազան միջոցներով (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն) հայտնի են դարձել որոշ տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր է անել եզրահանգումներ եւ առաջարկություններ:

1. Նախ՝ բոլոշեվիզմի մասին: Սա մեզ՝ հայաստանաբնակներիս համար նոր հասկացություն է, նոր գաղափար եւ բնականաբար լուրջ խորհելու տեղիք է տալիս: Հայերս շատ-

2. Հեռավոր բնակավայրերն անհրաժեշտ կլինի ապահովել հեռախոսացանցով, որը կծառայի ծայրամասային, նամանավանդ փոքր բնակավայրերի ամրապնդմանը:

3. Քաղաքներում եւ մասնավորապես մայրաքաղաքում վերականգնել-շատացնել ավտոմատ հեռախոսակետերը՝ վճարման ընդունված կարգով:

Բոլոր պարագաներում ես դրական եմ համարում Արմենտելի գործունեությունը Հայաստանում հավատացած լինելով, որ օգտակար կլինի բոլորի համար:

ԳՐԻԳՈՐ ԱՎԱԳՅԱՆ

ԿԱՊԻ ՈԼՈՐՏ

Վազգեն Մանուկյանը ընտրվեց ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի նախագահ

ԵՐԵՎԱՆ, 19 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունիսի 19-ին ՀՀ ԱԺ փոխնախագահ Տիգրան Թորոսյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ կապի ոլորտում ՀՀ կառավարության գործունեությունն ուսումնասիրող խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովի անդրանիկ նիստը: Ներկայացվեց Արմենտելի գործունեության համապատասխանությունը պայմանագրային պարտավորություններին, կապի ոլորտում ընդհանուր վիճակի ուսումնասիրությունը, կատարված ներդրումների ծավալները, արդյունավետությունը եւ պայմանագրային պարտավորություններին համապատասխանության ուսումնասիրությունը, ինչպես նաեւ հանձնաժողովի տրամադրության տակ գտնվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Ինչպես հայտնեցին ՀՀ ԱԺ հասարակայնության հետ կապերի վարչությունից, «Ժողովրդական պատգամավոր» խմբի անդամ Հակոբ Հակոբյանի առաջարկությամբ նիստում Վազգեն Մանուկյանը միաձայն ընտրվեց հանձնաժողովի նախագահ:

Հանձնաժողովում ընդգրկված են Վազգեն Մանուկյանը (ԱԺՄ), Արծրուն Աղաջանյանը («Օրինաց երկիր»), Համլետ Հարությունյանը («Իրավունք եւ միաբանություն»), Յուրի Մանուկյանը (ՀԿԿ), Մարտուն Մաթեւոսյանը (ՀՅԴ), Մելիք Գասպարյանը («Կայունություն»), Հակոբ Հակոբյանը («Ժողովրդական պատգամավոր»), Ժիրայր Գեւորգյանը («Հայաստան»), Հերմինե Նաղդալյանը (ՀՀԿ), Վարդան Մկրտչյանը (ՀԺԿ), անկախ պատգամավորներ Արշակ Սադոյանը եւ Գուրգեն Արսենյանը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա հունիսի 21-ին:

Իրանում հայկական ինքնաթիռի վթարի հետաքննությունը դեռեւս չի ավարտվել

ԵՐԵՎԱՆ, 19 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այս տարվա մայիսի 17-ին Իրանում վթարի ենթարկված «Հայկական ավիաուղիներին» պատկանող Յակ-40 ինքնաթիռի աղետի պատճառներն ուսումնասիրող հանձնաժողովը շարունակում է աշխատանքը: ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության լրատվության կենտրոնից տեղեկացրին, որ փորձագետների եւ ավիացիոն այլ մասնագետների կողմից մանրակրկիտ ու համակողմանիորեն հետազոտվում ու քննվում են վթարի հնարավոր բոլոր պատճառները: Նույն աղբյուրի հավաստմամբ, հայկական կողմն արդեն չի մասնակցում հետաքննությանը, եւ ունի հնարավոր վարկածներն ու փաստարկները, որոնք կներկայացվեն հանձնաժողովի վերջնական եզրակացությունից հետո:

Տավուշում թերթերի բաժանորդները բացառապես հիմնարկներն են

ՏԱՎՈՒՇ, 19 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Մամուլի տարածման Տավուշի մարզային դուստր» ՓԲԸ միջոցով այս տարվա առաջին կիսամյակի համար մարզում կատարվել է թերթերի ընդամենը 1 մլն 100 հազար դրամի բաժանորդագրություն, մոտավորապես նույնքան գումարի բաժանորդագրություն էլ սպասվում է երկրորդ կիսամյակի համար: Այս մասին հայտնեց ընկերության տնօրեն Զուլիետա Բեկնազարյանը: Նա նշեց, որ բաժանորդները բացառապես հիմնարկություններ են, ոչ մի անհատ թերթ չի բաժանորդագրվել: Մամուլ են բաժանորդագրվել մարզի տարածքում տեղակայված զորամասերը, ուսումնարանները եւ այլն: «Այժմ ով փող ունի, նրան թերթ պետք չէ, իսկ թերթի սիրահարն էլ գնելու դրամ չունի», ընդգծեց Զ. Բեկնազարյանը:

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ

Այցագրային կարգը կարելի է վերացնել

Սկիզբը էջ 1

Իրանում Հայաստանի դեսպան Գեղամ Ղարիբջանյանը **«Ազգի»** խնդրանքին՝ մեկնաբանելու հայ-իրանական սահմանային անցումն առավել դյուրացնելու իրանական կողմի առաջարկը, պատասխանեց. «Կարծում եմ, երկու երկրների միջեւ տնտեսական առաջընթաց կա, բայց նաեւ պետք է ձգտել, որպեսզի տնտեսական հարաբերակցությունը հավասարեցվի: Օրինակ, անցյալ տարի հայ-իրանական սահմանը հատել է 15 հազար ավտոմեքենա, որից 12 հազարը եղել է իրանական: Նույն հարաբերակցությունը վերաբերում է զբոսաշրջիկներին, առեւտրով զբաղվող անձանց: Այսինքն՝ եթե հարաբերակցությունը հավասարեցվի, ապա միանշանակ կողմնակից եմ այցագրային կարգի դյուրացմանը: Ուզում եմ նշել, որ դա մեր լուծելու խնդիրը չէ, այլ՝ երկու պետությունների արտգործնախարարությունների: Այսօրվա պայմաններում, կարծում եմ, խնդրի լուծման որեւէ խոչընդոտ չի կարող լինել, եւ խոսքը զուտ տնտեսական հաշվարկների մասին է»:

Տեղեկացնենք, որ հայկական սահմանը հատող իրանական յուրաքանչյուր մեքենայից գանձվում է 200 դոլար հարկ, ինչպես նաեւ Հայաստանի գանձարանը «հարստանում» է մեր երկրի Իրանի քաղաքացիներին տրվող եւ դրա դիմաց գանձվող այցագրերի գումարներով:

Ինչ վերաբերում է Մեղրու խնդրին, դեսպան Ղարիբջանյանի կարծիքով՝ «ինքնին ուրախալի է ԼՂ հակամարտության կարգավորման գործում Իրանի դերի կարեւորումը». «Սա նշանակում է, որ տարածաշրջանի խնդիրներն առանց տարածաշրջանի հզոր երկրներից մեկի՝ Իրանի մասնակցության, դժվար կլինի լուծել: Ինչ վերաբերում է Մեղրու խնդրին, ինչպես նշեցիք հարցի մեջ, կարծում եմ, ճիշտ ճանապարհ է ընտրված՝ տնտեսական զարգացման ճանապարհը: Մի քանի ամիս առաջ **«Ազգը»** գրեց, որ աշխուժություն է նկատվում Սյունիք-Արեւելյան Ատրպատական մակարդակով: Այդ աշխուժությունն օր-օրի ավելի է մեծանում»:

Արարատի ՀԷԿ-ը կկառուցվի 5,5 տարում

Արաս գետի վրա կառուցվելիք հայ-իրանական ՀԷԿ-ը կունենա 78,9 մգվտ հզորություն, տարեկան կարտադրի 469 մլն կվտ.ժամ էլեկտրաէներգիա եւ կարժենա 60-80 մլն ԱՄՆ դոլար: Նախատեսվում է ՀԷԿ-ի շինարարությունն ավարտել 5,5 տարում: Այս մասին, ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությանը հղում անելով, հաղորդում է «Թեհրան թայմս» օրաթերթը: ՀՀ էներգետիկայի նախարար Կարեն Գալուստյանը ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին տեղեկացրել է նաեւ, թե ՀԷԿ-ի կառուցման նախագիծը, որ ներկայացվել էր վերջերս Նյու Յորքում կազմակերպված Հայաստանի ներդրումների համաժողովում, հետաքրքրել է մի շարք արտասահմանյան ընկերությունների:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են. համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ՈՒՂՂԱԳԻԾ

ԱՍՈՒԼԻՍ

Նոր վարկեր ջրամատակարարման բարելավման համար

Հունիսի 9-15-ը Հայաստանի կառավարության ղեկավարությունը հերթական անգամ գտնվում էր Վաշինգտոնում: Նպատակը, ինչպես երեկվա մամուլի ասուլիսում հայտարարեց ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը, Համաշխարհային բանկից Հայաստանի ոռոգման համակարգի ինֆնահոս ջրամատակարարմանն անցնելու համար վարկ ստանալն էր: Բանակցությունների արդյունքում ստորագրվեց 32 մլն դոլարի վարկային պայմանագիր: Վարկը կստանանք սեպտեմբերին, Ազգային ժողովի հաստատելուց հետո: Իսկ մինչ այդ կտրամադրվի 1,5 մլն դոլար կանխավճար՝ նախնական աշխատանքների համար: Այս վարկի հիմնական միջոցները կուղղվեն Վայոց ձորի, այնուհետեւ Արմավիրի, ապա Այրումի եւ Այգեձորի ոռոգման համակարգի բարելավմանը: Մեկ այլ ծրագիր է Արաքս գետի վրա պատվարի կառուցումը: Այս բոլոր ձեռնարկումները կհանգեցնեն էլեկտրաէներգիայի զգալի խնայողությունների: Իսկ Արաքսի պատվարի վերաբերյալ ասուլիսին մասնակցող ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Գագիկ Մարտիրոսյանը հայտնեց, որ այն հնարավորություն կտա Արարատյան դաշտ ուղղել 100 մլն խմ ջուր: Դա նշանակում է, որ անուղղակի ձեւով կխնայենք Սեւանից բաց թողնվող ջրի (170 մլն խմ) մեծ մասը, իսկ եղվարդի ջրամբարը կառուցելով կունենանք Սեւանից բաց թողնվող ջրի մնացած մասի՝ 70 մլն խմ խնայողություն: «Արդյոք այս ծրագիրը չի՞ հարուցի Թուրքիայի դժգոհությունը» հարցին Գագիկ Մարտիրոսյանը պատասխանեց, որ 1966, 1983 եւ 2001 թթ. վերահաստատվել է Թուրքիայի հետ կնքած պայմանագիրը՝ Արաքսից հավասար չափով ջուր վերցնելու մասին: Մինչդեռ Հայաստանն այսօր չի կարողանում լիարժեք օգտագործել այդ պայմանագրի հնարավորությունները եւ Արաքսից ստանում է նախատեսվածից գրեթե կրկնակի փոքր ջուր:

Անդրադառնալով Հայաստանի կառավարության՝ խմելու եւ ոռոգման ջրի մատակարարման համակարգերի բարեփոխման ծրագրին, կոմիտեի նախագահը տեղեկացրեց, որ դրա արժեքը կազմում է 200 մլն դոլար: 57 մլն գերմանական մարկ Գերմանիայի կառավարությունից արդեն ստացվել է եւ 43 մլն մարկը հատկացվել, այսինքն՝ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել դրա ստացման վերաբերյալ: Վաշինգտոնում Համաշխարհային բանկից ստացվել է հիշատակված 32 մլն դոլարը եւ 65 մլն դոլարը հատկացվել:

Խմելու ջրի ինֆնահոս համակարգի անցնելու նպատակով 50 մլն գերմանական մարկի եւ 150 մլն դոլարի ստացման վերաբերյալ եւս նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել: Գագիկ Մարտիրոսյանը վերջին հավաստիացրեց, որ ջրամատակարարման համակարգի արմատական բարեփոխման այս ծրագիրը մինչեւ 2006 թ. կիրականացվի եւ մասնավորապես խմելու ջրի առումով Հայաստանի եթե ոչ բոլոր, ապա բնակավայրերի ճնշող մեծամասնությունը ապահովագրված կլինեն: Պատասխանելով այն հարցին, թե որքանո՞վ արդյունավետ կծախսվեն ստացված գումարները, նա բերեց 1996-ին ոռոգման համակարգին տրված առաջին՝ 52 մլն դոլար վարկի իրացման օրինակը: Այդ վարկից խնայվել է 5,5 մլն դոլար, որն ուղղվել է մի քանի այլ ջրատարների կառուցմանը եւ վերականգնմանը:

Վարդան Խաչատրյանը տեղեկացրեց նաեւ, որ պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Միջազգային արժութային հիմնադրամի ղեկավարների հետ, եւ պայմանավորվածություն է ձեռք բերվել SAC-IV վարկի առաջին տրանշի տրամադրման մասին: Այն, սակայն, կկազմի ոչ թե 15 մլն, այլ 14,3 մլն դոլար, ինչը ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը բացատրեց դրամի կուրսի տատանումներով: Նա նաեւ հավանական համարեց հոլանդական կառավարությունից 10 մլն գուլդեն (մոտ 4 մլն դոլար) դրամաշնորհի ստացումը: Վարդան Խաչատրյանը հույս հայտնեց, որ հուլիսին կայանալիք Հայաստանի դոնոր երկրների համաժողովում կտրամադրվեն լրացուցիչ դրամաշնորհներ, որոնք «պետք է ուղղվեն նախորդ տարիների պարտքերի մարմանը»:

Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը՝ դուրս գալով մամուլի ասուլիսում ներկայացված թեմայի շրջանակներից, պատասխանեց նաեւ իր ոլորտին առնչվող այլ հարցերի: Մասնավորապես, անդրադառնալով ընթացիկ տարվա համախառն ներքին արդյունքի կանխատեսվող ցուցանիշին, Վարդան Խաչատրյանը հավանական համարեց 6-7 տոկոս աճը: Այդ կանխատեսումը, ըստ նրա, հիմնավորված է եւ չափավոր:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Հայաստան-Գերմանիա խորհրդարանական խմբին հագեցած ծրագիր է սպասում

ԳԴՀ Բունդեսթագի նախագահի հրավերով հունիսի 18-ին ՀՀ Ազգային ժողովի 7 հոգուց բաղկացած պատվիրակությունը ժամանեց Բեռլին: Պատվիրակությունը, որ մեծավ մասամբ ներկայացնում է խորհրդարանական Հայաստան-Գերմանիա բարեկամության խումբը (նախագահ՝ Հրանուշ Հակոբյան), գլխավորում է ԱԺ փոխնախագահ Գագիկ Ասլանյանը: Վերոհիշյալ երկուսից բացի հրավիրյալների թվում են պատգամավորներ Վարդգես Մաթեւոսյանը, Գագիկ Մանուկյանը, Սեմեն Բաղդասարյանը, Մարտուն Մաթեւոսյանը եւ ԱԺ արտաքին հարաբերությունների վարչության միջազգային կազմակերպությունների գծով բաժնի վարիչ Անահիտ Գասպարյանը: Մինչեւ հունիսի 23-ը նախատեսված այցի շրջանակներում ԱԺ-ականները բազմաբնույթ հանդիպումներ, առանձնազրույցներ կունենան Բեռլինում եւ Պոտսդամում: Ըստ նախապես կազմված ծրագրի, հայաստանցի հյուրերը կհանդիպեն Բունդեսթագի գերմանա-կովկասյան խորհրդարանական խմբի նախագահ տիկին Քրիստա Լյորխեի, Ֆրիդրիխ Նաումանի, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամների ղեկավարների հետ, Բրանդենբուրգի երկրամասի խորհրդարանի նախագահ Հերբերտ Քնոբլիխի, Բունդեսթագի փոխնախագահ Ռուդոլֆ Զայթերսի, Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության փոխնախագահ, ԳԴՀ պատգամավորության նախկին նախագահ Ֆոլկեր Ռյուհեի, Բունդեսթագի ԱՊՀ երկրների հետ համագործակցության խորհրդարանական խմբի նախագահ Յոհաննես Պֆլուգի, արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Հանս Ուլրիխ Քլոզեի հետ: ԱԳՆ պետնախարար Քրիստոֆ Յոոպելի հետ նախատեսված է հանդիպում-առանձնազրույց, իսկ Բունդեսթագի աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ տիկին Դորիս Բառնեթի հետ՝ ճաշ-հանդիպում: Հայ խորհրդարանականները հանդիպումներ կունենան Կանաչների, Դեմոկրատական սոցիալիզմի կուսակցության ներկայացուցիչների հետ: Բեռլինյան հանդիպումների շրջանակներում չեն մոռացվել նաեւ տեղի երկու հայ համայնքները: Այս շարքում առաջինը Գերմանահայկական ընկերության հունիսի 19-ին կազմակերպածն է: Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքական խնդիրների մասին զեկուցում է ԱԺ փոխնախագահ Գագիկ Ասլանյանը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Ուխտագնացություն Սոչիսակավոր

Հունիսի 17-ին, ավանդույթը չխախտելով, «Նախիջեւան» հայրենակցական միությունն ուխտագնացություն էր կազմակերպել Վայոց ձոր՝ Սոչիսակավոր եկեղեցի, Գարեգին Նժդեհի շիրիմին: Այս տարի նշվում է ռազմական գործչի, մտավորական նվիրյալի 115-ամյակը:

Եղեգնաձորից անբարեկարգ ու դժվարանցանելի լեռնային ուղին հաղթահարելով հասանք բարձունք, ուր կիսավեր ու միայնակ կանգուն է Սոչիսակավորը, որի հարեւանությամբ էլ վերաթաղված է Գարեգին Նժդեհը: Սուրբ պատարագ մատուցեց Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի Քաշաթաղի հոգեւոր հովիվ Աբանես վարդապետ Մովսիսյանը, հետո նա նշեց, որ Գարեգին Նժդեհի գաղափարախոսությունը պետք է մտնի ոչ միայն ընտանիք ու դպրոց, այլեւ եկեղեցի ու մեր սրտերը: Քաշաթաղի գլխավոր բժիշկ, Արցախյան ազատամարտի մասնակից Արցախ Բունիաթյանն ուրախ էր, որ տարեցտարի ավելանում է ուխտավոր հայրենակիցների թիվը, սակայն, նրա կարծիքով, այսօր Նժդեհի մասին խոսում են այնպիսի մարդիկ, որ նսեմացնում են նրան, մինչդեռ Նժդեհին հասկանալու համար գաղափարի մահապարտ պետք է լինել: Վարուժան Կարապետյանը նախ հիշեց սարոյանական միտքը. «Իմ սիրտը լեռներում է...», ապա ավելացրեց, թե «այս վայրն ամփոփում է հայ ժողովրդի ոգին»: Նժդեհի թոռնուհի, դերասանուհի Գոհարինե Տրդատյանը ոգեւորված էր հավաքվածներով, ովքեր ծաղիկներ ու ծաղկեպսակներ էին դնում սպարապետի շիրիմին ու նրանց թվում շատ էին երիտասարդները, սակայն նշեց, որ ինչքան շատ խոսեն Նժդեհի մասին, այնքան նա բացահայտվում է ու ներկայանում որպես երեւույթ, միայն թե դա չդառնա շահարկումների ու փառասիրության առարկա: «Նախիջեւան» հայրենակցական միության նախագահ, Նժդեհի զարմիկ Վազգեն Տեր-Հարությունյանը նախ շնորհակալություն հայտնեց ՀՀ կառավարությանը՝ իրենց միջոցառումներին աջակցելու համար, ապա նշեց նաեւ, որ «Նժդեհյան պատգամները պահպանելով միայն կարող ենք հավատարիմ լինել նրա ուխտին եւ հիշատակի հավերժացմանը»:

Այսպիսին էր Նժդեհյան խորհուրդը բարձրաբերձ լեռներում, ուր մեկտեղ հավաքվել էին ամենատարբեր քաղաքական գործիչներ, մտավորականներ, երիտասարդական տարբեր խմբեր: Նրանք եկել էին հաղորդակցվելու Նժդեհի հետ, լսելու ու հասկանալու մեծ մտավորականին, ռազմական ու քաղաքական գործչին, իր ազգի նվիրյալին, ում շնորհիվ էլ մնաց ու գոյատեւեց Սյունիք-Զանգեզուրը:

ՀՅԴ անդամ, ԱԺ պատգամավոր Աղվան Վարդանյանը գտնում է, որ Նժդեհյան գաղափարախոսության մեջ կարելի է փնտրել ու հատաստել ազգային գաղափարախոսությունը, եւ դա է հենց արժեքային համակարգը: ՀՅԴ ԳՄ անդամ, ԱԺ պատգամավոր Արմեն Ռուստամյանը հպարտ է եւ կարծում է, որ բոլորս իրավամբ պիտի հպարտանանք, որ Գարեգին Նժդեհի ազգակիցն ենք ու գաղափարների կրողը, քանզի նա անհատականություն ու սրբություն է հայ ժողովրդի համար: ՀՀ նախագահին առընթեր մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահ Պարույր Հայրիկյանի հավաստմամբ, «Նժդեհյան գաղափարախոսությունն օգնում է, որպեսզի մենք ճիշտ ապրենք», սակայն նա հավատացրեց փոքր-ինչ վերածեց միտինգավայրի ու ավելի շատ խոսում էր ԱԻՄ-ի ու իրենց դավանանքների մասին, երբեմն դրանք աղերսելով Նժդեհյան խոսքերին:

Հետո հրաժեշտ տվեցին սրբավայրին: Իսկ Վայոց ձորի փոխմարզպետ Սամվել Թարվերդյանը խոստացավ ավանդույթը պահպանել եւ միջոցառումներն ավելի կազմակերպված դարձնել:

ՍԻՄՈՆ ՄԱՐԳՍՅԱՆ

Խաժակ արք. Պարսամյանի նամակը տիկին Թուրենչին

Անդրադառնալով մեր երեկվա «Սաբահի» հարցազրույցը Խաժակ արք. Պարսամյանի հետ» նյութին, ներկայացնում ենք Մ. Նահանգների Առաքելական թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոսի հունիսի 15-ի նամակը՝ ուղղված «Սաբահ» օրաթերթի թղթակից Նար Թուրենչին:

«Խորապես անհանգստացած եմ այն զգալի խեղաթյուրումներից, որոնցով ներկայացվել է անցյալ ամիս մեր ունեցած սիրալիր հանդիպումը, որը նպատակ ուներ կենտրոնանալու Հայաստանի քրիստոնեության դարձի 1700-ամյակին նվիրված ուխտագնացության վրա: Ներկայացված լուսաբանությունը («Խիզախ բառեր», «Սաբահ», հունիսի 8, 2001 թ.) այն սխալ տպավորությունն է գործում, որ Հայկական ցեղասպանությունը դեռեւս վիճելի հարց է, եւ ինչն առավել մտահոգիչ է, որ զոհերից ոմանք կարող են դեր խաղացած լինել իրենց իսկ ողբերգական վախճանի մեջ:

Այս պնդումները հստակորեն այն չեն, ինչ ես գիտեմ եւ զգում եմ որպես ցեղասպանությունից ծողոպրածի հետնորդ: Ցեղասպանությունը ենթադրությունների կամ կարծիքների հարց չէ, այլ՝ պատմական փաստ եւ իրողություն: Մա եղել է մեր բոլոր քննարկումների ելակետը, եւ դրան հավատարիմ եմ մնացել հոգեւոր ծառայության տասնամյակների ընթացքում:

Որպես եկեղեցու առաջնորդ եւ որպես անհատ հավատում եմ, որ հայ եւ թուրք ժողովուրդների միջեւ համագործակցության հարաբերություններն այսօր կենսական են եւ երկու երկրների շահերին համապատասխան: Կարեւոր է, որ բացենք մեր ժողովուրդների միջեւ հաղորդակցության գծերը՝ հետազոտելու համար արդյունավետ երկխոսությունը: Բայց ոչ մի բան չի կարող ջնջել 20-րդ դարի սկզբին հայերի ցեղասպանությանն առնչվող փաստերը եւ այն հսկայական ազդեցությունը, որ թողել է մեր երկու ժողովուրդների վրա աշխարհի տարբեր կողմերում:

Հակառակ ամեն ինչի, շարունակում եմ հավատալ, որ բաց երկխոսությունը լավագույն ճանապարհն է, որը կարող է առաջնորդել հնարավոր հաշտեցման: Խորապես հույս եմ հայտնում եւ աղոթում, որ նման երկխոսությունը շուտով կդառնա բնական երեւույթ երկու ազգերի հարաբերություններում:

Մեր խոսակցությունը տեղի ունեցավ ազնիվ եւ բաց մթնոլորտում: Հույս ունեմ, որ դա խթան կհանդիսանա հետագա երկխոսության եւ հաշտության համար: Դժբախտաբար, իմ արտահայտությունների սխալ մեկնաբանություններն ու կոնտեքստից դուրս ներկայացնելը չեն նպաստում այս արժեքավոր նպատակների իրականացմանը: Մենք զավակներն ենք մի ընդհանուր երկնային հոր, որը մեզ օժտել է այս աշխարհն առավել լավ վայր դարձնելու ընդունակությամբ եւ պատասխանատվությամբ: Աղոթում եմ, որ մենք մեր ջանքերն օգտագործենք այդ ազնիվ նպատակներին հասնելու համար:

Աղոթքներով՝

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ՍԵՓԱԿԱՆԱՇՈՐՀՈՒՄ

Մասնավորեցնե՞լ ռազմավարական օբյեկտները

Տեւական ժամանակ է, ինչ մեզանում սկսվել ու շարունակվում է բարոյական մի ծեծ, մի անվերջանալի թվացող բանավեճ կարելի՞ է մասնավորեցնել ռազմավարական նշանակության օբյեկտները: Ոմանք, օրինակ բերելով Արեւմուտքն ու հատկապես Միացյալ Նահանգները, անվերկբայորեն մատնանշում են այո, կարելի է, նույնիսկ անհրաժեշտ է: Մյուսները, դարձյալ մատնանշելով նույն Արեւմուտքն ու, ասենք, Անգլիան, պնդում են, թե «այնտեղ էլ ամեն ինչ մասնավորեցված չէ», պետությունն իր ձեռքում է պահում ազգի հաղթական, տնտեսական ու մանավանդ ռազմական անվտանգության ապահովման տեսակետից կարեւորագույն ոլորտները: Հետեւաբար, «ռազմավարական նշանակության օբյեկտների մասնավորեցման (եւ դեռ հախո՞ւտն) կառավարության կուրսը անթույլատրելի է»:

Ո՞վ է ճիշտ եւ ո՞վ սխալ այս բանավեճում:

Որքան էլ տարօրինակ հնչի երկու պնդումներն էլ... ճիշտ են: Նայած որ երկրում ինչպիսի ավանդույթներ են գործում, տասնամյակներով, անգամ դարերով ձեւավորված ինչպիսի՞ ըմբռնումներ կան «ռազմավարական նշանակության» օբյեկտների ու ոլորտների մասին: Խորհրդային իրականության ծնունդ հանդիսացողներիս համար պարզապես անընդունելի է, թե ինչպե՞ս կարող է որեւէ պետության մեջ ռազմարդյունաբերական համալիրը... պետական չլինել: Սինչդեռ հաղթակիրթ Ֆրանսիայում, որին շատ ու շատ բաներում ուզում ենք նմանվել, մասնավոր ֆիրմաները վաղո՞ւց հաջողությամբ արտադրում են, ասենք, ռմբակոծիչներ, կործանիչներ, կալանիչ օդանավեր: Պետությունը, բանակի օգուտի կարիքները հոգալու համար, անհրաժեշտության դեպքում այդպիսի պատվեր է իջեցնում հիշյալ մասնավոր ֆիրմաներին, եւ դրանից կարծես թե ոչ մեկն էլ իրեն վատ չի զգում: Աչքերիս առաջ ռուսական ռազմարդյունաբերական համալիրը սկսում է հարմարվել համաշխարհային շուկայական տնտեսության համանման պահանջներին: Ռուս կոնստրուկտորների մշակած մի շարք գերժամանակակից ռազմական ուղղաթիռներ, օրինակ «Ակուլա» կոչվածները, որոնք այսօր հավասարը չունեն աշխարհում եւ շատ մասնագետների կարծիքով 10 տարով առաջ են ընկել Միացյալ Նահանգներից, վաճառվում են... օտարերկրյա պատվիրատուների: Ռուսաստանի բանակը դրանց կարիքը չունի՞: Ունի, անշուշտ, բայց պետությունը... փող չունի այդպիսիք գնելու սեփական բանակի համար՝ սեփական ռազմական գործարաններից: Ռազմական ինքնաթիռ, ուղղաթիռ, անգամ ատոմային սուզանավ արտադրող ձեռնարկությունը ռազմավարական նշանակություն ունի՞, թե՞ ոչ: Անշուշտ, ունի: Այդ դեպքում ինչպե՞ս հասկանալ, որ ոչ միայն երկրներում այդպիսի ձեռնարկությունը շա՞տ հանգիստ կարող է լինել... մասնավոր: Շատ պարզ՝ այդպիսի ձեռնարկության եւ պետության միջեւ իրավահարաբերությունները կանոնակարգվում են հստակ գործող օրենքներով, որոնք ապահովում են տվյալ պետության ռազմավարական շահերը:

Հարցերի հարցը սա է՝ մասնավորեցման, վաճառքի այս կուլտուրան ունե՞նք, թե՞ չունենք: Ռազմավարա՞կան, թե՞ ոչ-ռազմավարական օբյեկտ ենք սեփականաշնորհում-վաճառում, տեղացո՞ւ ենք տալիս, թե՞ արտասահմանցու՝ էական չէ: Էականն այն է, թե այդ մասնավորեցման կամ վաճառքի պայմանագրում, որ շատ հաճախ մեր պետության անունից ստորագրում են այս կամ այն պատասխանատուները, հայկական կողմը կարողանո՞ւմ է ամրագրել այնպիսի դրույթներ, որոնք բացառեին տվյալ օբյեկտի շահագործումից (կամ շահագործման դիտավորյալ դադարեցումից) մեր պետությանն ու ժողովրդին պատճառվելիք հնարավոր վնասները:

Բերեմ վերջին շրջանում այդքան չարչրկված բաքսիչ էլեկտրացանցերի կամ հենց թեկուզ էլեկտրաէներգիա արտադրող ձեռնարկությունների սեփականաշնորհման կամ պարզ ասած՝ վաճառքի օրինակը, որին ակնհայտորեն գնում է Հայաստանի կառավարությունը: Համաձա՞յն ենք դրան, թե՞ ոչ: Համաձայն ենք, եթե առկա են առնվազն հետեւյալ պայմանները՝ հնարավոր գնորդը իրավունք չի ունենալու ֆեֆն ուզած պահին հոսանքազրկելու հայ սպառողին՝ մեկ, չի կարողանալու առանց մեր թույլտվության արտահանել մեր էլեկտրաէներգիան՝ երկու, չի կատարելու իր գնած օբյեկտների տեխնիկա-տնտեսական ցուցանիշները վատացնող փոփոխություններ՝ երեք, չի վերավաճառելու առանց մեր թույլտվության՝ չորս, երկրում արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում անհապաղ Հայաստանի կառավարությանն է զիջելու դրանց գործարկման կամ գործունեությունը դադարեցնելու իրավունքը՝ հինգ: Կարելի է մտածել էլի մի քանի կետեր, որոնք լիովին երաշխավորեն մեր ռազմավարական շահերը, պրծավ-գնաց: Մի կարծեք, թե սրանք շատ «խիստ» նախապայմաններ են եւ ոչ ոք այդ պայմաններով մեր օբյեկտները չի գնի: Կգնի, եթե նրա հեռագնա նպատակը Հայաստանի արտադրության զարգացմանը տեւական ժամանակով նպաստելն է եւ ընդսմին՝ շահույթ ստանալը: Իսկ եթե գնողի նպատակը մեր երկրի արտադրությունը կործանելն է, կարճ ժամանակում գերշահույթ ստանալը եւ ուրիշ ոչինչ, բնականաբար, այդպիսինը վերը նշածս նախապայմաններից կխրտնի: Ավելի՝ լավ, չարամիտ դիտավորություն ունեցողի ոտքը մեր երկիր չի մտնի:

Եթե կառավարությունը կարողանա այդ կերպ սեփականաշնորհել-վաճառել՝ ցանկացած ռազմավարական կամ ոչ-ռազմավարական օբյեկտ՝ լիովին համաձայն եմ: Եթե ոչ՝ համաձայն չեմ: Եվ այստեղ ուզում եմ բացեիբաց գրել այն, ինչ բոլորի շուրթերին է. Հայաստանի հարաբերաբար հաջողակ կառավարությունները չեն կարողացել մինչեւ այժմ եղած խոշոր սեփականաշնորհումների ժամանակ պայմանագրային հիմունքներով ապահովել մեր պետության ռազմավարական շահերի պաշտպանությունը (Արմենտել, Կոնյակի գործարան եւ այլն), որի հետեւանքները օրավուր տեսնում ենք: Նշանակում է՝ որոշակի պաշտոնատարներ խոշոր չափերի կաշառքներ են վերցրել, քանի որ ստորագրել են մեր պետության շահերը, մեղմ ասած, հաշվի չառնող պայմանագրեր, սակայն ակնհայտորեն հոգեկան հիվանդների տեսք չունեն: Վարչապետ Անդրանիկ Մարգարյանն ուզո՞ւմ է հիդրոկայանները կամ ԲԷՏ-երը վաճառել: Շատ բարի: Թող հրապարակի այդ դեռ հնարավոր վաճառքի այն պարտադիր պայմանագրային կետերը, որոնք պետք է երաշխավորեն մեր պետության ռազմավարական շահերը եւ հանրությանը ապացուցեն, որ կոնկրետ այս կամ այն ռազմավարական օբյեկտի սեփականաշնորհման գործարքից կրկին խոշոր չափերի կաշառքի հոտ չի գալիս: Այսինքն, հասարակությունը պիտի համոզված լինի, որ կառավարությունը սեփականաշնորհման կուրսը շարունակում է ոչ թե այն բանի համար, որ երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները դարձյալ պղտոր ջրում ծուկ որսան եւ գրպանները լցնեն, այլ՝ ստացված գումարները սոցիալ-տնտեսական զարգացման որոշակի ծրագրերի ուղղելու, արտադրությունը զարգացնելու, մի խոսքով՝ ծանրագույն ճգնաժամը հաղթահարելու համար: Այդ դեպքում՝ թող վաճառքի, Աստված բարին տա:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Առաջընթացը փոքր է, սակայն՝ անժխտելի»

Կհաջողվի՞ ստեղծել ջրամատակարարման կենսունակ համակարգ: Նորից Էյ Յութիլիթիի մասին

«Ազգի» հունիսի 6-ի համարում լույս տեսած «Միմյանց պարտավորությունները ճշտելիս. Էյ Յութիլիթի-ՀՀ կառավարություն» հոդվածն անարձագանք չմնաց վերոհիշյալ երկուսի (եւ ոչ միայն նրանց) կողմից: Արձագանքները եւ դրական էին, եւ բացասական. այսինքն՝ եւ համաձայնություն կար, եւ անհամաձայնություն հոդվածում արտահայտված մտքերին: Մեկ հոդվածով, բնականաբար, չես սպառի ջրամատակարարման համակարգում կուտակված հարցերը: Այս անգամ նույն նյութին կանդրադառնանք այլ տեսանկյունից: Մենք անընդհատ խոսում ենք, թե իտալական կազմակերպության Հայաստանում այս ծրագրի իրականացումը ստանձնելուց ի վեր ինչպիսի պարտավորություններ չեն կատարվել: Այս անգամ, սակայն, կփորձենք պարզել, թե որ պարտավորություններն են կատարվել նրանց եւ հայերիս կողմից: Մեր հարցերին պատասխանում է Համայնքային զարգացման ծրագրի գրասենյակի տնօրեն Վարազդատ Ավոյանը՝ փորձելով հնարավորինս անաչառ գնահատել պարտավորությունների կատարման առաջին տարվա արդյունքները:

– Պրն Ավոյան, այսպիսով՝ ինչո՞վ է զբաղված եղել էյ Յութիլիթին այս մեկ տարվա ընթացքում:

– Որպեսզի պատասխանենք, թե էյ Յութիլիթին այս ընթացքում ինչ է արել, նախ ներկայացնենք, թե ինչ պիտի աներ: Հայկական կողմի հետ նրանց կնքած պայմանագրում թվարկվում է կատարողականության 131 ցուցանիշ, իսկ դրանց իրականացման համար սահմանված ժամկետը 4 տարի է: Վերոհիշյալ 131-ի թվում կան նաեւ գնահատվող ցուցանիշներ, որոնք ամենամյա ամփոփման են ենթարկվելու, իսկ արդյունքները՝ աշխատանքի լավ կամ վատ որակի վերաբերյալ հրապարակելու է անկախ հաշվետուգողը: Այսպիսով, չարժե, որ շատերնք ոչ մենք, ոչ էլ՝ էյ Յութիլիթին. 1-2 ամիս անց, պարտավորությունների անդրանիկ տարվա ավարտին, անկախ հաշվետուգողն ի լուր երեւանաբնակների կհայտարարի, թե ինչպիսին են կատարողականության ցուցանիշները: Ես կարող եմ պարզապես թվարկել, թե ինչպիսի աշխատանքներ էին սահմանված ըստ պայմանագրի, անընդհատ ջրամատակարարման ավելացում, էլեկտրաէներգիայի տպառման կրճատում, հոսակորուստների հետազոտում, ատոմային միացումների անջատում, վարձավճարների հավաքագրման բարելավում, մի շարք ծրագրերի մշակում: Այս տարի նրանք պիտի կատարեին 11 պարտավորություն: Վերոնշյալ աշխատանքների կատարման համար 4 տարվա ընթացքում նախատեսված է ծախսել 8 մլն դոլար. այս տարի նրանց ծախսը կազմել է 1 մլն դոլար: Սրանք, սակայն, չոր փաստերն ու թվերն են, որոնք գրեթե ոչինչ չեն ասում: Իսկ իրական ծեռքբերումների մասին խոսելիս, օրինակ, չենք կարող չնշել երկու, միմյանց օտար կազմակերպությունների՝ էյ Յութիլիթիի եւ «Զրմուղ-կոյուղու» մեկ ընդհանուր տանիքի ներքո միաձուլման եւ համատեղ գործունեության փաստը: սկզբնական օտարությունն արդեն հաղթահարված է:

Այս մեկ տարվա ընթացքում էյ Յութիլիթին մշակել եւ գործարկման է նախապատրաստել ջրամատակարարման համակարգի առողջացման ավելի քան 30 ծրագիր: Առանձին ուշադրություն է դարձվել կադրերի պատրաստման ու վերապատրաստման հարցին. հիշեցնեմ, որ վերջին տարիներին, օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով, «Զրմուղ-կոյուղին» լքել էին բազմաթիվ մասնագետներ՝ երիտասարդներն ու արդեն փորձառուները: Այս բացն այժմ լրացվում է: Ի վերջո, իտալացիներին վստահված 4-ամյա ծրագրից հետո մեզ անհրաժեշտ է տեղում ունենալ բարձրորակ մասնագետներ, որոնց կհանձնվի համակարգի ղեկավարումը: Որոշակի առաջընթաց է նկատվում վարձավճարների հավաքման գործում, թեպետ ցուցանիշը, միեւնույն է, առայժմ ցածր է. մինչ էյ Յութիլիթիի գործունեությունը՝ ցուցանիշն ընդամենը 12-14 տոկոս էր, որից 7 տոկոսը կազմում էին բնակչության վճարումները, իսկ այժմ այդ ցուցանիշը հասցվել է 22 տոկոսի:

Անաչառ լինելով արձանագրենք, որ ծրագրերի լիարժեք իրականացմանը խանգարում են մի շարք գործոններ, որոնց դեմ էյ Յութիլիթին փորձում է պայքարել: Օրինակ ատոմային միացումները. դրանք մի տեղում անջատում ես, մեկ այլ տեղում են ի հայտ գալիս: Իսկ օրենսդրական դաշտն, ուր պիտի արժանի պատժաչափ սահմանվեր այդ մարդկանց համար, չափազանց անկատար է. դրամական չնչին տուգանքներով այսօր քչերին կսաստես: Բացի այդ՝ դժվար է կազմակերպված գործունեություն ծավալել կիսավեր, տարիներ շարունակ կառավարում չտեսած, սնանկացած այս համակարգում: Սակայն որքան էլ անմխիթար թվա պատկերը, պիտի ստեղծենք կենսունակ մի համակարգ:

– Այդուհանդերձ, վարձավճարներին առնչվող պարտավորությունը չի կատարվել, եւ սա սերտորեն կապված է եւս մի անկատար պարտավորության՝ ջրաչափերի տեղադրման հետ: Ինչպե՞ս եւ ե՞րբ պիտի լուծվի այս խնդիրը:

– էյ Յութիլիթին արդեն իսկ մշակել է գանձման մեխանիզմ, որն էլ ներկայումս փորձում է կիրառել գործնականում: Վարձավճարներն, ըստ այդմ, պիտի գանձվեն նախ եւ առաջ շուրջօրյա ջրամատակարարումից օգտվողներից, այնուհետեւ ու հետզհետե՝ ավելի պակաս չափով ջուր ունեցողներից: Մեր ուշադրության կենտրոնում են ոչ թե այն բնակիչները, որոնք ջուր ստանում են եւ ի վիճակի չեն դրա դիմաց վճարել, կամ նրանք, որ ջուր չեն ստանում, սակայն ստիպված են վճարել, այլ այն մարդիկ, ովքեր հնարավորություն ու միջոցներ ունենալով՝ չեն վճարում շուրջօրյա ջրամատակարարման դիմաց. նրանք, ովքեր ատօրինի միացումների ու ջրի վաստնման «հեղինակ» են: Վերջերս էյ Յութիլիթին շուրջ 800 ատօրինի միացում է բացահայտել ու ոչնչացրել: Ինչ վերաբերում է ջրաչափերի ներդրմանը, ապա սա արդեն վաղուց է դարձել օրվա խնդիր: Ըստ երկկողմ պարտավորությունների 4-ամյա ծրագրի՝ այդ համակարգը կունենանք չորրորդ տարում միայն: Իսկ առաջին տարվա համար նախատեսված աշխատանքն արդեն կատարված է. գնվել են աղբյուրների, օրվա կարգավորիչ ջրամբարների, երեւանի կարեւոր հանգույցների եւ, վերջապես, յուրաքանչյուր շենքի մոտ տեղադրվելիք ջրաչափերն ու հոսքաչափերը: Մնում է դրանց ասիճանական տեղադրումը: Ի դեպ, բնակելի շենքի մուտքին ջրաչափ տեղադրելու օրինակներ ունենք. խոսքս Դավիթաշեն-ֆիզիկայի ինստիտուտ թաղամասին է վերաբերում: Ջրամատակարարման վիճակն այստեղ, նախկինի համեմատ, նկատելիորեն բարելավվել է, ինչն էլ ինքնըստինքյան հանգեցրել է վարձավճարների հավաքման արդյունավետության բարձրացմանն այստեղ:

Դեռեւս 1999-ի մարտին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց ջրաչափերի տեղադրման վերաբերյալ, սակայն փաստ է, որ «Զրմուղ-կոյուղու» այն ժամանակվա ղեկավարությունը խիստ անբավարար չափով է իրականացրել այդ որոշումը: Փաստորեն, մենք ստիպված եղանք գրեթե զրոյից սկսել վերոհիշյալ որոշման կենսագործումը: Սակայն ջրաչափերի տեղադրումն անխուսափելի է եւ կիրականացվի:

– Ինչպես հայտնի է, ՀԲ-ն 30 մլն դոլարի վարկային ներդրում է արել այս ծրագրի համար՝ ֆինանսավորման 20 տոկոսն էլ՝ 5,5 մլն դոլարի չափով, թողնելով ՀՀ կառավարությանը: էյ Յութիլիթիի պնդմամբ՝ այդ 5,5 մլն-ն առ այսօր չի վճարվել...

– Դեռեւս վարկային համաձայնագրում էր ամրագրվել, որ վճարելիք 5,5 մլն դոլարից 4 մլն-ը կառավարությունը մուծելու է էներգետիկներին կուտակված պարտքի մարման դիմաց, մինչ օտերասորի ժամանումն ու պարտավորությունների սանձնումը: Այս կետն ամրագրվել էր մի պարզ նպատակով. թեթեւացնել եղած հսկայական պարտքերի բեռը՝ հետագնելով օտերասորի աշխատանքը: Անցյալ տարեվերջին այս պարտավորությունը կատարվել է: Անցյալ 1,5 միլիոնը կառավարությունը պիտի վճարեր որպես համաֆինանսավորման մասնաբաժին: Այսինքն՝ ծրագրի շրջանակներում կատարվող յուրաքանչյուր շինարարական աշխատանքի եւ տեղական գնումների համար նախատեսվող ծախսի 20 տոկոսը վճարում է կառավարությունը: Բյուջետային սուղ պայմանների պատճառով կառավարությունը հաճախ ուշացնում է վճարումները, ինչի հետեւանքով դանդաղում է էյ Յութիլիթիի ծրագրային պարտավորությունների՝ սահմանված ժամկետում կատարումը: Սա էլ, բնականաբար, պատճառ է դառնում որոշակի տարաձայնությունների իտալական կազմակերպության եւ մեր կառավարման մարմինների միջեւ: Իմ ղեկավարած գրասենյակը յուրատեսակ միջնորդ, միջանկյալ օղակ է այս երկուսի միջեւ. քաղաքականության հետ համատեղ՝ հնարավորինս առաջնորդվում ենք փոխհարաբերության եզրն այդ հարաբերություններում: Անկախ դժվարություններից, որոնք բազմաթիվ են, սակայն՝ լուծելի, համոզված եմ, որ ծրագրի իրականացումը հաջողությամբ կպսակվի. այս լավատեսության համար կան բոլոր նախադրյալները: Պարզապես ժամանակ է պետք:

ԼՈՒԻԶ ԴՈՎԱՍԱՊՅԱՆ

Բորիս Ելցին. «Հպարտանում եմ Ռուսաստանի ժողովրդավարական նվաճումներով»

Անցյալ տարվա աշնանը Ռուսաստանում լույս տեսավ ՌԴ նախկին նախագահ Բորիս Ելցինի «Նախագահական մարաթոն» գիրքը, որն ավելի ուշ հրատարակվեց ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում եւ մի շարք այլ երկրներում: Իր գրքի մասին Ելցինն ասում է, որ այնտեղ չկան սուղված քաղաքական ձեւակերպումներ եւ պատրաստի պատասխաններ: Ինքը գրի է առել սեփական դիտարկումները, գնահատականները, խոհերը: Դա ոչ թե ծրագիր է կամ հաշվետվություն, այլ «պարզապես գիրք է»: Ելցինն այսօր էլ հանդիպումներ է ունենում ՌԴ նոր ղեկավարների հետ, որոնց համար ինքը լավատեղյակ զրուցակից է: Նա հպարտանում է նոր Ռուսաստանի ժողովրդավարական նվաճումներով եւ ազատություններով: «Ազգի» ընթերցողներին ներկայացնում ենք հատվածներ Բորիս Ելցինի գրքից:

Շատերին գուցե հետաքրքրում է, թե ես ինչպիսի եկամուտներ ունեմ: Այլ կերպ ասած՝ արդյոք ես հարո՞ւստ մարդ եմ: Ճիշտն ասած՝ չգիտեմ: Նայած թե ինչպիսի չափանիշներով ենք դասում: Եկեք տեսնենք, թե ինչ ունեմ եւ ինչ չունեմ: Եվ այսպես, ապրում եմ պետական ամառանոցում: Ունեմ (կնոջս հետ համատեղ) անշարժ կայք՝ ամառանոց Մոսկվայի մարզի Օդինցովոյի շրջանում: Մակերեսը 452 քառ մետր է, հողամասը՝ 4 հեկտար: Ունեմ 1995 թ. գնված BMW ավտոմեքենա, բնակարան Մոսկվայի Օսենյայա փողոցում: Ունեմ սառնարաններ ամառանոցում եւ տանը: Ունեմ մի քանի հեռուստացույց, կահույք, հագուստներ, թենիսի ռակետներ, կետոք, որսորդական հրացան, գրքեր, երաժշտական կենտրոն, դիսկոֆոն: Կինս եւ դուստրս ունեն զարդեր: Հիմա այն մասին, ինչ բանկում չունեմ: Չունեմ արժեթղթեր, բաժնետոմսեր, մուրհակներ: Արտասահմանում չունեմ անշարժ կայք: Արտասահմանյան բանկերում չունեմ հաշիվներ եւ խիստ թանկարժեք քարեր: Չունեմ ոսկու, ալմաստի եւ նավթի հանքեր, արտասահմանյան կալվածքներ, զբոսանավեր, օդանավեր, ուղղաթիռներ եւ այլն: Կինս եւ դուստրս Լենան ու Տանյան բանկային հաշիվներ չեն բացել օվեյցարական, անգլիական կամ որեւէ այլ արտասահմանյան բանկում: Նրանք չունեն դրյակներ եւ առանձնատներ, կալվածքներ, արտասահման ընկերությունների բաժնետոմսեր, գործարաններ կամ հանքեր: Իսկ ես ինչքա՞ն փող ունեմ: Այստեղ ամեն ինչ պետք է լինի ստույգ, կոպեկների ճշտությամբ: Դրա համար պետք է վերցնել եկամուտների իմ վերջին հայտարարագիրը: Ռուսաստանի խնայբանկում (տարադրամով եւ ռուբլով) 1999 թ. հունվարի 1-ի դրությամբ ունեցել եմ 8.436000 ռուբլի: 1998 թ. իմ եկամուտը կազմել է 183837 ռուբլի: Այո՛, ես աղքատ մարդ չեմ: Գրքերս հրատարակվել են եւ շարունակվում են հրատարակվել ամբողջ աշխարհում: Ռուսաստանի նախագահի փողերը ռուսական բանկում են: Այդպես էլ պետք է լինի: Ոչ ես, ոչ էլ ընտանիքս անդամները երբեւէ եկամուտներ չենք ստացել սեփականաշնորհումից, իմ պաշտոնի կամ ազդեցության հետ կապված ինչ-ինչ գործարքներից: Մեր բոլոր եկամուտները միանգամայն բաց ու թափանցիկ են: Իսկ որ կարող եմ ընտանյոք մեկնել երկրագնդի որեւէ կետ, հանգստանալ եւ ճանապարհորդել, կարծում եմ, ես վաստակել եմ այդ իրավունքը:

***

Ես եւ Նինան միասին ենք արդեն քառասուն տարուց ավելի. երբեք չենք բաժանվել, երբեք առանձին չենք մեկնել արձակուրդ, չենք կիսել մեր կյանքը: Հիշում եմ նրան, երբ 18-ամյա ուսանողուհի էր: Հիշում եմ, երբ աշխատում էր Սվերդլովսկի խոշորագույն նախագծային ինստիտուտում, հաստատում էր ոչ միայն զբաղվել դուստրերի հետ եւ ընթրիք պատրաստել, այլեւ գիշերով արդուկել իմ կոստյումը՝ մինչեւ դառնա իդեալական: Իսկ ես առաջին քարտուղար էի եւ պետք է համապատասխան տեսք ունենայի: Առանց Նինայի ես երբեք չէի դիմանա այդքան քաղաքական փոթորիկների ոչ 87-ին, ոչ 91-ին, ոչ էլ հետագայում: Նինան զարմանալիորեն անկեղծ, անմիջական մարդ է: Նա շատ յուրօրինակ է վերաբերվում քաղաքական դրամաները: Քանիցս ինձ է դիմել նման խոսքերով. «Բորյա, գուցե խոսեի՞ր Լուժկովի հետ, գուցե նա պարզապես սխալվո՞ւմ է, չէ՞ որ պետք է ընբռնի»: Ես ժպտալով խոստանում էի, որ, իհարկե, կհանդիպենք, կխոսենք: Եթե քաղաքականությամբ զբաղվեին Նինայի պես մարդիկ, ապա մեր քաղաքականությունն ուրիշ կլիներ: Ի դեպ, Լուժկովի հետ կապված է մի հետաքրքիր, նույնիսկ զվարճալի պատմություն: Մեր հարեւանությամբ բնակվող Յուրի Միխայլովիչը երկար ժամանակ մեզ կաթ էր ուղարկում իր ֆերմայից, այսպես ասած, իր կովից: Իսկ հետո դադարեց ուղարկել հենց 98-ի ամռանը, երբ սկսեց գլխավորել իր կուսակցությունը: Ահա այսպիսի զուգադիպություն: Սուրհանդակի միջոցով հայտնել էր, թե, ցավոք, կովը հիվանդացել է: Նինան մինչեւ օրս զարմանում է, որ կովն այդքան ծանր է հիվանդացել եւ այդքան երկար:

***

Պուտինին ես նկատեցի, երբ գլխավորում էր վարչակազմի գլխավոր վերահսկիչ վարչությունը: Ապա նա դարձավ Յումաշովի առաջին տեղակալը (տարածաշրջանային աշխատանքի գծով): Կրեմլում նա հայտնվեց 1997 թ. մարտին: Նրա զեկուցումները հստակության տիպար էին: Ի տարբերություն մյուս տեղակալների, նա խուսափում էր շարադրել իր տեսակետներն աշխարհի եւ Ռուսաստանի վերաբերյալ: Հենց այդ պատճառով ուզում էի նրա հետ խոսել: Ինձ աղբեգրեց նաեւ Պուտինի կայծակնային արձագանքը: Երբեմն իմ խրթին հարցերը մարդկանց ստիպում էին կարմրել եւ տանջալիորեն բառեր որոնել: Պուտինը պատասխանում էր այնքան հանգիստ ու բնական, ասես, պատրաստ է կյանքում բացարձակապես ամեն ինչի: Սկզբում նույնիսկ զգուշանում էի, բայց հետո հասկացա, որ այդպիսին է նրա բնույթը: 1998 թ. ամռանը գործադուլավոր հանքափորների «ռելսային պատերազմը» ամեն օր միլիոնների վնասներ էր պատճառում երկրին՝ հարվածելով առաջին հերթին թոշակառուների եւ բյուջեային աշխատողների գրպանին: Անվտանգության դաշնային ծառայության (ԱԴԾ) այն ժամանակվա տնօրեն Նիկոլայ Կովալյովը գրեթե խուճապահար էր: Այդ պրոֆեսիոնալ չեկիստը չէր սիրում հարուստ գործարարներին: Աստիճանաբար նրա գերատեսչությունը սկսեց որոնել նոր թշնամիներ, վարկաբեկիչ նյութեր հայթայթել առեւտրային բանկերի, առանձին գործարարների վերաբերյալ: Ես չէի մոռացել նաեւ այն, թե ինչպես 1996-ին ԱԴԾ-ի ղեկավարները եռանդագին զբաղվել էին մսացածին «Սոբչակի գործով»: Դա քաղաքական գիծ էր դարձել: 1998-ի ամռանը որոշեցի Կովալյովին փոխարինել Պուտինով: Նախ Պուտինը երկար տարիներ աշխատել էր հետախուզությունում, ապա կառավարման դպրոց էր անցել: Բայց գլխավորն այն էր, որ նրա մեջ զուգորդվում էին ժողովրդավարական հայացքները եւ քաղաքացիական անսասան հայրենասիրությունը: Նշանակման մասին Պուտինին հայտնեցին հրամանագրի հանձնման պահին: Ես այդ ժամանակ արձակուրդում էի: Ինձ մոտ ժամանեց Կիրիենկոն, բերելով Պուտինի նշանակման հրամանագրի նախագիծը: 1998 թ. հուլիսի 25-ին Պուտինը նշանակվեց ԱԴԾ-ի տնօրեն: Արձակուրդից վերադառնալով, զրուցեցի նրա հետ: Առաջարկեցի վերադառնալ զինվորական ծառայության, ստանալ գեներալի կոչում: «Իսկ ինչո՞ւ, անսպասելիորեն պատասխանեց Պուտինը: Ես պահեստ եմ զորացրվել 1991 թ. օգոստոսի 20-ին: Քաղաքացիական անձ եմ: Կարեւոր է, որ ուժային գերատեսչությունը գլխավորի հենց քաղաքացիական անձ: Եթե թույլ կտաք, կմնամ պահեստի գնդապետ»: Պուտինը շատ գրագետ ձեւով վերակազմակերպեց ԱԴԾ-ն: Նա աշնանը շատ խիստ հայտարարություն արեց քաղաքական ծայրահեղականության առնչությամբ: Այն ժամանակ Մակաշովի բարձրացրած հակահրեականության ալիքը հիշ էր մնում հեղեղեր փողոցները: Կարծում եմ, Պուտինի անսասանությունը շատերին հետ պահեց խուլիգանական արարքներից եւ սադրանքներից: Նա հանգիստ չտվեց Մոսկվայի արմատական խմբավորումներին, որոնք սկսեցին մամուլում հայտարարել, թե ստեղծվում է «ոստիկանական պետություն»: Բայց ամենագլխավորը Պուտինի քաղաքական անսասան դիրքորոշումն էր: Վարչապետն ուզում էր ԱԴԾ-ն ներքաշել իր ազդեցության ոլորտը: Վարչապետի հետ մշտական բախումները չէին

շփոթեցնում Պուտինին, որը չէր ներքաշվում քաղաքական խաղերի մեջ: Վլադիմիր Վլադիմիրովիչի միակ հստակ չափանիշը այս կամ այն արարքի բարոյականությունն է, այս կամ այն մարդու օրինավորությունը: Նա չէր շտապում մուտք գործել մեծ քաղաքականություն, բայց վստահ զգում էր մյուսներից ավելի շուտ եւ նախազգուշացնում էր ինձ: Երբ իմացա, թե Պուտինն ինչպես է Սոբչակին արտասահման անցկացրել, չգիտեի ինչպես վարվել: Նա վստահ էր ենթարկել ոչ միայն իրեն: Բայց մյուս կողմից արարքը մարդկային խոր հարգանք էր առաջացնում: Օգոստոսի 5-ին աշխատասենյակ կանչեցի Ստեպաշինին եւ Վոլոշինին: Վարչապետին հայտնեցի, որ որոշել եմ իրեն պաշտոնաթող անել եւ Դումայում որպես փոխվարչապետ առաջադրել Վլադիմիր Պուտինի թեկնածությունը: Երբ Ստեպաշինին խնդրեցի հաստատել Պուտինին փոխվարչապետ նշանակելու հրամանագիրը, նա վաղաժամ եւ սխալ համարեց այն: Ապա սկսեց խոսել իր անձնական նվիրվածության մասին: Ես խոստացա մտածել եւ կրկին ընդունել Ստեպաշինին: Նույն օրն ինձ զանգահարեց Չուբայսը եւ թախանձագին խնդրեց հանդիպում ունենալ: Անմիջապես հասկացա, թե ինչ է ուզում: Դա արագացրեց իմ վճիռը, թեեւ Չուբայսը հակառակն էր ուզում: Հետագայում իմացա, թե Չուբայսն ինչպիսի գրոհ է ձեռնարկել վարչակազմի եւ առաջին հերթին Պուտինի վրա: Չուբայսը նախ հանդիպել էր Պուտինին եւ նախազգուշացրել, թե ինչպիսի ահավոր հարվածների կարող է նա ենթարկվել քաղաքականության մեջ: Գլխավոր փաստարկն այն էր, որ Պուտինը երբեք տեսադաշտում չի եղել եւ չգիտե, թե ինչ է դա: Ավելի լավ է հրաժարվել անմիջապես, քան թե հետագայում հանգամանքների պարտադրանքով: Պուտինը պատասխանել էր, թե ինքը կատարում է նախագահի որոշումը: Այդ ժամանակ Չուբայսը որոշել էր գործել վարչակազմի միջոցով: Վոլոշինին, Յումաշովին եւ Տանյային փորձել էր համոզել, որ Պրիմակովի հրաժարականից հետո Ստեպաշինի չպատճառաբանված պաշտոնաթողությունը հասարակության մեջ կարող է ընկալվել որպես Կրեմլի լիակատար քայքայում եւ քաղաքական հոգեվարք: Բոլորը կկարծեն, թե նախագահը լրիվ խելքը թոցրել է: Դա ազդանշան կծառայի Պետդումայի, Դաշնության խորհրդի հարձակումների համար: Այդ դեպքում կպակասեն միայն «աշխատավորների զանգվածային ելույթները»: Հիշեցնելով «ռելսային պատերազմը», Չուբայսն ասել էր, թե մոլեգնած Լուժկովը կարող է Կարմիր հրապարակ բերել տասնյակ հազարավոր մարդկանց: Այդ ժամանակ Վոլոշինը Չուբայսին առաջարկել էր սանձնել վարչակազմի ղեկավարությունը: Առաջարկությունն անակնկալի էր բերել Չուբայսին, որը մենաշնորհ կերպով տնօրինում էր Ռուսաստանի էլեկտրացանցերը: Աչքից հեռու մնալով, նա ազդում էր քաղաքական իրավիճակի վրա, եւ այդ դերը լիովին ձեռնտու էր նրան: Չուբայսը չէր ուզում վերադառնալ վարչակազմ, ուստի սիրված համաձայնեց Պուտինի նշանակմանը:

ՄՇԱԿՈՒՅԹ

Երբ բառերը դառնում են կամուրջներ

Ժամանակի բերումով մասնատված մեր ժողովրդի երկու հատվածները միշտ էլ ձգտել են իրարու, փորձել են միավորվել եւ այդ կատարել են տարբեր ձեւերով մշակույթով, տնտեսապես, ռազմական ուժով, գիտության միջոցով: Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուբեն Սաֆարեսոյանի «Արեւմտահայերեն-արեւելահայերեն ուղղախոսական բացատրական բառարանը» (հմուտ բառարանագիր Սերգեյ Գալստյանի խմբագրությամբ) մեկն է այն միավորող ուժերից, որոնք թել առ թել հյուսում եւ օրեցօր ավելի կենսունակ են դարձնում Հայաստանտիյոտ երակը: Եղել են ժամանակներ, երբ հայ ժողովրդին միասնական ազգ պահողը եղել են լեզուն եւ կրոնը: Փա՛ռք Աստծո, հիմա այդ ժամանակներն անցել են, բայց չի անցել լեզուն իմանալու, լավ իմանալու անհրաժեշտությունը: Ընդհակառակը, ավելի է կարեւորվել, քանի որ այդ անելու համար ստեղծվել են ազատ պայմաններ, եւ պետք է օգտվել դրանից:

Ռ. Սաֆարեսոյանի բառարանում, ինչպես նշվում է առաջաբանի մեջ, ընդգրկված են արեւմտահայերենի այն բառերն ու դարձվածային միավորները, «որոնք արեւելահայերենի բառապաշարի հետ համեմատելիս ի հայտ են բերում ձեւային կամ իմաստային գոնե մեկ տարբերություն»: Թերեւս առաջին հայացքից սարսափելի թվա, բայց հենց տարբերություն ունեցող բառերի առանձնացումն ու ուսումնասիրությունն են ավելի մերձեցնում մեր լեզվի երկու գրական ճյուղերը: Դրանք կազմում են այն սահմանը, որն առանձնացնում է արեւելահայերենն ու արեւմտահայերենը, բայց հենց դրանց ուսումնասիրությունն է կամուրջ դառնում այդ երկուսի միջեւ, հիմք դառնում փոխներթափանցման: Պետք է ասել, որ այդ սահմանը վաղուց խախտված է, իսկ կամուրջը՝ գցված, որովհետեւ արդեն շատ բառեր են անցել մի տարբերակից մյուսին թե հարստացնելով, թե մերձեցնելով հայերենի երկու գրական տարբերակները: Ընդհանրապես արեւելահայերենի եւ արեւմտահայերենի միավորումը առաջին հերթին կատարվում է բառային համակարգում: Եվ հատկապես վերջին տարիներին, երբ բառային անցումներն ավելի ու ավելի մեծ թիվ են կազմում, անհրաժեշտություն է առաջանում ճնշել դրանք, դասակարգել ու ներկայացնել ժողովրդին ճիշտ եւ կայուն հունի մեջ դնելու համար լեզվական գեշի հոսանքը: Այդպիսի փորձ արդեն կատարվել էր. 1991 թ. Երեւանում լույս է տեսել Արտեմ Սարգսյանի «Արեւմտահայերենի բառարանը»: Սակայն հենց այս բառարանի առաջաբանում նշվում է, որ բառարանում տեղ գտած բառերի մի մասը փոխներթափանցման հետեւանքով արդեն գործածական է նաեւ արեւելահայերենում: Նկատի ունենալով այս եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բառարանի հրատարակումից արդեն անցել է տասը տարի, իսկ այդ ժամանակամիջոցում նոր փոփոխություններ էլ են տեղի ունեցել, կարելի է վստահ ասել, որ կարիք կար սկսված գործը շարունակելու եւ նորովի ու ավելի մանրամասն ներկայացնելու մեր բառապաշարի այդ զարգացումը:

Ռ. Սաֆարեսոյանի «Արեւմտահայերեն-արեւելահայերեն ուղղախոսական բացատրական բառարանը» ընդգրկում է շուրջ 16000 բառ եւ դարձվածային միավոր: Դրանք, ինչպես նշվեց, այն բառերն ու դարձվածքներն են, որոնք մեր լեզվի երկու ճյուղերը համեմատելիս դրսեւորում են իմաստային կամ ձեւային գոնե մեկ տարբերություն: Իսկ այդ տարբերությունները պայմանավորված են տարբեր հանգամանքներով:

Դրանց հիմա վրա էլ բառարանում ընդգրկված բառերը կարելի է դասակարգել հետեւյալ ձեւով.

ա) Բառեր, որոնք գործածվում են միայն արեւմտահայերենում (աղվոր, ասիկել, էրիկ, հոս եւ այլն):

բ) Բառեր, որոնք արեւմտահայերենում գործածության ավելի մեծ հաճախականություն ունեն (դրացի, ոնակ, տակավին եւ այլն):

գ) Բառեր, որոնք արեւմտահայերենում եւ արեւելահայերենում ունեն ձեւային ընդհանրություն, բայց արտահայտում են տարբեր իմաստներ (անուշ՝ հաճելի եւ մուրաբա, վայրկյան՝ 1/60-րդ րոպե եւ րոպե եւ այլն):

դ) Բառեր, որոնք մեր լեզվի երկու ճյուղերում հանդես են գալիս հնչյունափոխական-ուղղախոսական տարբերակներով (բարդի-բարտի, դավանել-դավանիլ, դելֆին-դելփին եւ այլն):



ե) Բառեր, որոնք արեւելահայերենում եւ արեւմտահայերենում կազմվել են բառակազմական տարբեր կաղապարներով կամ տարբեր բաղադրիչներով (բանվոր-գործավոր, դեղատուն-դեղարան, դեղատոմս-դեղագիր եւ այլն):

զ) Բառեր, որոնք ստեղծվել են արեւմտահայերենում՝ օտար բառերից խուսափելու համար: Դրանք նորակազմ հայեցի բառեր են (բանկ-դրամատուն, օդերա-երգախաղ, ռադիոձայնատիյոտ եւ այլն):

է) Գրաբարյան բառեր ու բառածեւեր, որոնք հաճախ են գործածվում արեւմտահայերենում, հատկապես գեղարվեստական գրականության մեջ (ակաղձուն, փողփողենէջ եւ այլն):

Բառարանում ընդգրկված չեն դիպվածային բառերը, որոնք ստեղծվել են տվյալ տեղում գործածվելու եւ մասնավոր իմաստ արտահայտելու համար: Հասկանալի է, որ հեղինակը չի գայթակղվել ստվար բառարան կազմելու մոլուցքով եւ խուսափել է այդ բառերն իր աշխատանքում ընդգրկելուց, թեեւ կարելի էր կատարել նաեւ այդ «դիպվածային» նշումով, որպեսզի այդ բառին հանդիպելիս ընթերցողն իմանար՝ ընդհանուր-գործածական բառ է, թե դիպվածային:

Աշխատանքը գրելիս հեղինակն օգտվել է ոչ միայն գեղարվեստական գրականությունից, այլեւ մամուլից, դասագրքերից, տեսական ձեռնարկներից, բառարաններից, եւ դրա շնորհիվ էլ բառարանում ներկայացված է կենդանի, ոչ գրային բառապաշարը:

Շատ կարեւոր է այն հանգամանքը, որ բառարանում բոլոր բառերը տրված են իրենց արտասանական տառադարձությամբ: Ինչպես հայտնի է, արեւմտահայերենի եւ արեւելահայերենի արտասանական համակարգերը էապես տարբերվում են իրարից (օրինակ՝ ծուկ-ցուգ, դուռ-թուր եւ այլն): Բառարանի այս բաժինը գործնական նշանակություն ունի: Այն մեծապես կնպաստի ճիշտ արտասանությունը սովորելուն: Դպրոցներում, ուսումնական տարբեր հաստատություններում այս հարցին մինչեւ այժմ շատ քիչ ուշադրություն է դարձվել: Արեւմտահայերենի արտասանությունը գրեթե չի պահպանվում նաեւ արեւմտահայերեն դրամատիկական ստեղծագործությունների բեմականացման ժամանակ: Այնպես որ բառարանը կարելի է եւ պետք է կիրառել նաեւ այդ բնագավառում:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում բառարանում տեղ գտած դարձվածային միավորները: Ինչպես հայտնի է, դարձվածային միավորների ձեւավորման հարցում կարեւոր են թե լեզվական, թե արտալեզվական գործոնները: Քանի որ մեր ժողովրդի արեւմտահայ եւ արեւելահայ հատվածները ապրել ու ապրում են մշակութային, տնտեսական եւ աշխարհագրական տարբեր պայմաններում, տարբերություններ կան նաեւ դրանց ազդեցությամբ ձեւավորված դարձվածային միավորների միջեւ: Դարձվածային միավորները նրանով էլ են յուրօրինակ, որ ունեն փոխաբերական իմաստ, որը երբեմն հնարավոր չէ հասկանալ նույնիսկ դարձվածի կազմի մեջ մտնող բառերն իմանալիս (օրինակ՝ կոնակը շոյել-ֆծնել, կոճակ ընել-խոսքը վերջացնել, անուշի կապել-համոզել եւ այլն): Հետեւաբար գործնականում խիստ կարեւոր է դրանց ընդգրկումը բառարանում:

Բառարանը վերջում ունի նաեւ տեղանունների եւ անձնանունների ցանկ, ինչը մի արժանիք էլ է ավելացնում այս աշխատությանը:

Ինչպես տեսնում ենք, լույս է ընծայված մի արժեքավոր ու անհրաժեշտ գիրք, որը մեծապես նպաստում է արեւմտահայերենի ուսումնասիրմանը, դյուրին դարձնում գիտական հետագա աշխատանքները: Սակայն կան որոշ թերություններ, որոնք կցանկանայինք նշել հետագա վերահրատարակության ժամանակ՝ բառարանը դրանցից զերծ տեսնելու ցանկությամբ (իսկ որ բառարանը պետք է վերահրատարակել, հաստատում է այն փաստը, որ գիրքն ունի մեծ կարեւորություն, բայց ոչ մեծ տպաքանակ):

Ցանկալի կլիներ, որ աշխարհագրական տեղանունների ցանկն ավելի ընդարձակ լիներ, իսկ անձնանունների ցանկը մասամբ ընդգրկեր այլ բառեր: Պարզ չէ, թե ինչու են բերված Եսթեր, Իսկուհի, Հայաստիի, Մարիցա, Սիմա, Սիրարփի, Վանուհի, Անանիա, Անաստաս անունները, որոնք արեւելահայերենում էլ գործածական են եւ ուղղագրական տարբերություն չունեն:

Միասնական չէ մոտեցումը հատուկ անուններից կազմված բառերի նկատմամբ: Եթե բառարանում կա Սղանիա եւ սղաներեն, ինչու կա Ուրահնա, բայց չկա ուրահներեն եւ այլն:

Բառարանի առավելությունների կողքին թերությունները շատ փոքրաթիվ են, եւ դա հաստատում է բառարանի հաջողված լինելը: Բառարանը լույս է ընծայվել Հարություն եւ Նուտիա Վաբորճյանների հովանավորությամբ: Նրանց իր շնորհակալությունը պետք է հայտնի ոչ միայն հեղինակը, այլեւ այն ընթերցողները, որոնք ձեռք են բերել եւ գործածում են բառարանը: Լույս տեսնելուց հետո գիրքն արդեն միայն հեղինակի սեփականությունը չէ, այլ ողջ ժողովրդի, հատկապես այս դեպքում՝ թե արեւելահայի, թե արեւմտահայի: Ուրեմն ողջունենք այս նախաձեռնությունը եւ հուսանք, որ ապագայում էլ մեր ժողովուրդը կհարստանա նորանոր հայանվեր աշխատություններով:

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐԳՍՅԱՆ,
բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

«Մենք սիրեցինք այս երկիրը»

Ինչպես հայի համար պարսից գիրն է գաղտնի, այնպես էլ իրանցու համար՝ հայ մշակույթը

Դեսպան Գեղամ Ղարիբջանյանը Թեհրանի հայկական ակումբում երեւանից եւ Գյումրիից ժամանած նկարիչներին ասաց. «Դուք տեսաք Արեւելքի մարգարիտը»: Եռդարձի ճանապարհին արվեստաբան Հենրիկ Իգիթյանին հարցրեցի. «Դուք գտա՞ք Արեւելքի մարգարիտը»: Պատասխանեց. «Մենք գտնելու ճանապարհին ենք, գտնելը շատ դժվար է: Բայց մենք սիրեցինք այս երկիրը եւ փորձեցինք ճանաչել»:

Գյումրեցի Արտուշ Մկրտչյանին խնդրեցի պատմել Թեհրանի արդի արվեստի թանգարանում բացված ժամանակակից հայ նկարիչների ցուցահանդեսի, ընդհանրապես տպավորությունների մասին: Ասաց. «Ֆանտաստիկ երկիր էր, հրաշալի միջավայր, հրաշալի մարդիկ, ցնցող տպավորություններով ենք հեռանում: Շաբաթն անցավ վայրկյանի նման: Այնպիսի թանգարան, ինչպիսին Թեհրանի արդի արվեստի թանգարանն է, չի զիջում ոչ եվրոպական, ոչ ամերիկյան չափանիշներին: Ինչ վերաբերում է մարդկանց, ապա նման վերաբերմունք դժվար է գտնել: Այսպիսի բարեհամբույր մարդկանց դժվար է գտնել այս այլասերված աշխարհում»:

Արտուշը Գյումրիի «Ստիլ» կերպարվեստի թանգարանի տնօրենն է. «Մենք ունենք շատ խոշոր հավաքածու, որի մի փոքր մասը՝ շուրջ 30 գործ, ներկայացնում ենք իրանցի արվեստասերների դատին»: Թեհրանի արդի արվեստի թանգարանում հունիսի 11-ին բացված հայ ժամանակակից կերպարվեստի նմուշների ցուցադրումը կշարունակվի մինչեւ հուլիսի 6-ը: «Ցուցահանդեսն անցավ փառահեղ: Երկու պատճառով. նախ այն կազմակերպվել էր շատ հետաքրքիր, բարձրակարգ թանգարանում, որը, վստահաբար կարող եմ ասել, չի զիջում աշխարհի առաջնակարգ նմանատիպ կառույցներին, երկրորդ՝ Հայաստանի կողմից ներկայացված էր հետաքրքիր հավաքածու՝ ժամանակակից հայ գեղանկարչությունը: Իրանցի արվեստասերներն ընդունեցին հայկականը, արձագանքները հետեւյալն էին՝ նմանատիպ ցուցահանդես ուղղակի չէին պատկերացնում: Սա անակնկալ էր ե՛ւ մեզ համար, լավ իմաստով, ե՛ւ իրանցիների համար», ասում է Արտուշը:

Ցուցահանդեսին ներկա հայ մյուս նկարիչները՝ Թենի Վարդանյանը, Հերիքնազ Գալստյանը, Արարատ եւ Արտուշ Սարգսյանները վստահեցնում են, որ ցուցահանդեսը հաջողել է, նաեւ այն պատճառով, որ իրանցիների համար հայ կերպարվեստը միանգամայն նորույթ է: Այս ցուցահանդեսը շատերի աչքերը բացեց, ցույց տվեց, թե ինչ լայն դիապազոն ունի նոր սերնդի հայ կերպարվեստը: «Սա գեղագիտական հետախուզություն էր՝ ինչպե՞ս կընդունվի, հայկականի ի՞նչը կսիրեն: Երբ ցույց տվեցի մեր դասականների հավաքածու ալբոմը, թանգարանի տնօրենը հիացավ եւ ասաց, թե շատ կուզենար ցուցադրել: Պետք է ցուցադրել Սարյանի, Կոջոյանի գործերից, որոնք կազմված են Պարսկաստանի հետ, մեր մյուս լավագույն նկարիչներին: Մեզ համար չափանիշ է դարձել եվրոպան: Բայց Արեւելքի գործերը շատ ավելի մարդկային են, Աստծուն մոտ», ասում է Հ. Իգիթյանը:

Սեպտեմբերին Թեհրանում կազմակերպվելու է խոշոր միջազգային ցուցահանդես, որին մասնակցելու հրավեր է ստացել նաեւ Հայաստանը: Պրն Իգիթյանն ասում է, որ անպայման մասնակցելու են, արդեն պատրաստ են: Արվեստաբանը նաեւ հետաքրքիր առաջարկություն է արել. Թեհրանում, Երեւանում եւ Մոսկվայում բացել հայ եւ իրանցի երեխաների մանկական ցուցահանդեսներ, հրավիրել «ամբողջ երկրագունդը». «Ընտրել ենք այն առանցքը, որը պետք է ամրապնդել նաեւ մշակույթով եւ աղացուցել դրա անհրաժեշտությունը»:

Հենրիկ Իգիթյանը կարծում եւ վստահ է, թե հայ ժամանակակից արվեստը հզոր է: Հզոր է, եթե նույնիսկ համեմատում ենք ժամանակակից Իտալիայի, Ֆրանսիայի արվեստի հետ: Նրանք, ովքեր ասում են, թե հայ մշակույթը «մեռնում է», ըստ արվեստաբանի, նման կարծիք ունեցող արվեստագետներն ուղղակի իրենց սպառել են եւ այլ բան չունեն անելու, քան փնովել մյուսներին. «Ոչինչ չի «մեռնում», պարզապես փոխվում է մենթալիտետը»: Այսօր, այո՛, չկա Փափազյան, բայց այսօր չէր կարող Փափազյան լինել, այսօր Ռեմբրանդտ էլ չկա, որովհետեւ ժամանակն այլ անուններ է պահանջում: Այսօր պիտի Մինաս ծնվեր, Վրույր ծնվեր, ժամանակն է այդպես թելադրում: Բոլոր երկրներում փոխվում են չափանիշները, կարեւորը՝ որակը չկորցնենք»: Կարո՞ղ եք նշել 5-6 հայ նկարիչների, որոնք կարողանան ներկայանալ, հային ներկայացնել աշխարհին. «Հինգ էլ, տասն էլ: Ասեմ՝ Սարգիս Ամալբաշյան, Արարատ Սարգսյան, Գաբրիել Մանուկյան, Թենի Վարդանյան, Մարինա Դիլանյան, Ալբերտ Հակոբյան, Կամո Նիգարյան, Ռուբեն Գրիգորյան...»:

ԹԱԹՈՒԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՅՈՒՅՑԱՀԱՆԴԵՍ

«Ծաղկած մսքեր»

Արվեստագետի ներքին ազատության ձգտումը եւ նրա արտահայտումը նկարչուհի Սվետլանա Մանդալյանը փորձել է իրականացնել գծագրական նրբին եւ կարծես այլերկրային տրամադրություններ ստեղծող գունային վառ արտաբխումներով: Նրա նկարների մթնոլորտը երազային է, լեցուն մանկության հեքիաթի բույրերով: Օրերի կապույտ հորիզոններում ուրվագծվող «ծաղկած մսքերի» թեթեւ թռիչքները բացում են նկարչուհու ազատ ու անկաշկանդ ներաշխարհը՝ տաք գույների սիրո արարումներով: Սեփական աշխարհի եւ իրականության սահմանները նկարչուհին «տարանջատում» է յուրատեսակ գունային ֆոնավորումով, որտեղ գույնը օրվա շողարձ-վարդագույն է, ընդգծուն ու ողորկ, որի մեջ բարձրանում են զանազան պատկերներ ծառերի ուրվագծումներով՝ ծյուղատարած, ճկների, խեցիների, ծովային բույսերի կերպարանքով:

Լինելով Երեւանի մարիոնետների պետական թատրոնի հիմնադիրներից եւ բեմադրելով հեքիաթներ Սունդուկյանի անվան թատրոնում, Սվետլանա Մանդալյանը ներթափանցել է մանկության աշխարհը՝ դրոշմելով այն իր ստեղծագործություններում:

Նկարչուհին ազատ է գծի, գույնի, կոմպոզիցիայի շրջանակներում: Չլինելով պրոֆեսիոնալ եւ բնականորեն չանցնելով ուսուցման մասնագիտական համարատասխան փուլեր, նկարչուհին ինքնաբուխ նվիրումով կարողացել է հասցնել իր ստեղծագործությունը պրոֆեսիոնալ մակարդակի: Դա նրա ներքին սերն է՝ ուղեկցվող բնատուր շնորհով եւ ստեղծագործելու կամքը՝ կյանքի կոչված գույների միջոցով: Նկարչուհին ունի ենթագիտակցական մղում ստեղծագործելիս եւ վստահում է իր զգացական աշխարհին: Նրա նկարներից յուրաքանչյուրը («Կապույտ օր», «Ծաղկած մսքեր», «Տրամադրություն կապույտում», «Նախնիների հետքերով») մի տրամադրություն է, մի հոգեվիճակի գունարտահայտում:

Սվետլանա Մանդալյանի գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսի բացման արարողությունը տեղի ունեցավ օրերս ժամանակակից արվեստի թանգարանում: Սա նկարչուհու անհատական առաջին ցուցահանդեսն էր, ուր ներկայացված էին նրա շուրջ 30 աշխատանքները: Բացման արարողությանը ողջույնի ջերմ խոսքեր ասացին նկարիչներ Կարեն Սմբատյանը, Հենրիկ Վարդենիկցին, Խաչիկ Աբրահամյանը եւ արվեստասեր իր բարեկամները:

ՄԵԼԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ,


ՈՐ ՈՒՆԻ ԱՂԵՐ
ԲԱՆ Ց ՍԻՆ ԽԱԴԱԲՈՐՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆԻ:

ՍԱՐԶԱԿԱՆ

Ռուսվեցին բոլոր մրցանակակիրները

Աշխարհամասի չեմպիոնը Էմիլ Սուտովսկին է

Ավարտվեց Մակեդոնիայի Օհրիդ քաղաքում անցկացված շախմատի եվրոպայի երկրորդ առաջնությունը: Այն, չեմպիոնին եւ մրցանակակիրներին անվանելուց բացի, նաեւ պետք է որոշեր այն շախմատիստներին, որոնք հանդես կգան տարեվերջին անցկացվելիք աշխարհի առաջնությունում:

Հիշեցնենք, որ Հայաստանի չորս շախմատիստներ՝ Ռաֆայել Վահանյանը, Աշոտ Անաստասյանը, Սմբատ Լպուտյանը, Կարեն Ասրյանը, ինչպես նաեւ Չեխիայում բնակվող մեր հայրենակից Սերգեյ Մովսիսյանը իրավունք նվաճեցին հանդես գալու աշխարհի առաջնությունում:

Առաջին եւ երկրորդ տեղերը, 13 հնարավորից վաստակելով 9,5-ական միավոր, բաժանել էին էմիլ Սուտովսկին (Իսրայել) եւ Ռուսլան Պոնոմարյովը (Ուկրաինա): Երրորդ եւ չորրորդ տեղերը, 9-ական միավորով, բաժանել էին Հուդիք Պոլգարը (Հունգարիա) եւ Զուրաբ Ազմայփարաշվիլին (Վրաստան):

Եվ ահա, չեմպիոնին եւ մրցանակակիրներին որոշելու համար անցկացվեցին միկրոմրցախաղեր: Երկուսում էլ արագ շախմատի կանոններով անցկացված պարտիաներից հետո գրանցվեց 1,5-0,5 հաշիվ. Սուտովսկին հաղթեց Պոնոմարյովին, Ազմայփարաշվիլին՝ Պոլգարին: Այսպիսով, Եվրոպայի չեմպիոնի կոչումը նվաճեց էմիլ Սուտովսկին, իսկ երկրորդ եւ երրորդ մրցանակակիրներ դարձան համապատասխանաբար Ռուսլան Պոնոմարյովը եւ Զուրաբ Ազմայփարաշվիլին:

Նաեւ լրացուցիչ մրցախաղերի միջոցով 21 շախմատիստներ վիճարկեցին աշխարհի առաջնության վերջին 4 ուղեգրերը: Դրանք բաժին հասան Կիրիլ Գեորգիեւին, Ալեքսանդր Դելչեւին (երկուսն էլ՝ Բուլղարիա), Զոլթան Գիմեշին (Հունգարիա) եւ Ժոել Լոթիեին (Ֆրանսիա):

Աշխարհի առաջնությունում՝ երկու մասնակից

Այսօր Չինաստան են մեկնում Հայաստանի երկու հեծանվորդներ՝ սպորտի վարպետներ Վազգեն Ղուլիջանյանը եւ Տիգրան Կորկոտյանը:

Մեր մարզիկները հանդես կգան Պեկինում անցկացվող աշխարհի առաջնության մեկ մրցածեւում՝ 180 կմ խմբային վազքում: Իհարկե, դժվար է ակնկալել, որ մեր երիտասարդ մարզիկները հրաշքներ կգործեն աշխարհի առաջնությունում, բայց նրանք ձեռք կբերեն այնքան անհրաժեշտ փորձ, որը շատ պետք կգա հետագա կարեւորագույն մարզական սուգաստեներում: Ավելացնենք, որ Ղուլիջանյանն ու Կորկոտյանը մեր ամենահեռանկարային հեծանվորդներից են. Վազգենն Արմավիրից է, օլիմպիական հերթափոխի հանրապետական մարզադպրոցի սան, Տիգրանը ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանող է, «Հայաստան» մարզական միության անդամ:

Ռ. Ա.

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի 1976 թ. շրջանավարտները խոր վշտով հայտնում են իրենց համակուրսեցու՝

ՎԱՐԴԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

վաղաժամ մահը եւ ցավակցում հանգուցյալի հարազատներին:

ՀԱՄԱԿՈՒՐՍԵՑԻՆԵՐ

«ԳՈՒԳԱՐՔԻ ԳԵՌ» ՊՓԲԸ

22.06.2001 թ.

Սեռուդային կարգով վաճառում է՝

1. Ավտոինքնաթափ ՄԱԶ-5551 1989 թ. արտ.
2. Ավտոինքնաթափ ԿՐԱԶ-256Բ 1987 թ. արտ.

Հասցեն՝ Լոռու մարզ, Մարգահովիտ

Հայտարարություն

Ս. թ. հունիսի 25-ից հուլիսի 1-ը Պերինատոլոգիայի, մանկաբարձության եւ գինեկոլոգիայի կենտրոնում աշխատելու են ֆրանսիացի բժիշկներ՝ կատարելով գինեկոլոգիական բոլոր տեսակի վիրահատություններ, մասնավորապես, լապարոսկոպիկ միջամտություններ անպտղության դեմքում:

Նախապես դիմել՝

Աջափնյակ, Մարգարյան 6/2, նախկին հանրապետական ենթդիսպանսեր, հեռ.՝ 34-18-83:

Իտալիայի դեսպանատուն

Fax: 54 23 41

Վարորդ-գրասենյակի աշխատող աշխատատեղի համար Իտալիայի դեսպանատունը Երեւանում հայտարարում է մրցույթ:

Մրցույթին կարող են մասնակցել ինչպես ՀՀ, այնպես էլ այն օտարերկրյա քաղաքացիները, որոնք երկու տարուց ավելի բնակվում են ՀՀ-ում:

Դիմորդները պետք է ունենան ՀՀ-ում գործող վարորդական իրավունքի B, C կարգի վկայական, տիրապետեն հայերեն, իտալերեն, անգլերեն լեզուներին:

Մրցույթի անցկացման պայմանների եւ այլ լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Իտալիայի դեսպանատուն, հետեւյալ հասցեով՝ Խորենացու փակուղի 1, հեռ. 54 23 35, 54 23 36:

Traduzione per l'autista:

L'Ambasciata d'Italia a Yerevan indice un concorso per l'assunzione di un autistacentralinista.

Al concorso possono partecipare sia i cittadini armeni sia gli stranieri residenti nella Repubblica Armena da oltre due anni.

I candidati devono possedere la palente tipo B, C, valido nella Repubblica Armena, conoscere le lingue armeno, italiano, inglese.

Per ulteriori informazioni rivolgersi all'Ambasciata d'Italia al seguente indirizzo: Korenazi 1, tel. 54 23 35, 54 23 36.

ARMENTEL

Հայտարարություն

Արմենտելը հայտարարում է մրցույթ

Երեւան քաղաքում Արմենտելի ստորաբաժանումներում առկա օդորակիչների տեխնիկական զննման, վերանորոգման եւ տեխնիկական սպասարկման աշխատանքների համար:

Մրցույթի անցկացման պայմանները եւ աշխատանքների մանրամասները շահագրգիռ կազմակերպությունները կարող են ստանալ հետեւյալ հասցեով.

Արմենտել ՀՁ, Սիսակյան 2, 6-րդ հարկ, 634 սենյակ, հեռ. 28.70.66:

Առաջարկների ներկայացման վերջին ժամկետը՝ 2001 թ. հուլիսի 6-ը, ժամը 12:00-ն:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

YEREVAN-PARIS-LYON

SABERATOURS-SEVAN

ՍԱԲԵՐԱՏՈՒՐ-ՍԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆ-ՓԱՐԻԶ-ԼԻՈՆ

Ավիատոմսեր եւ տուրիզմ

«Սաբերատուր-Սեւան»
ճամփորդական գործակալությունն առաջարկում է.

- *Ավիատոմսեր Երեւանից ուղիղ չվերթերով*

ARMENIAN AIRLINES swissair KLM BRITISH AIRWAYS АЭРОФЛОТ

տրանզիտ թռիչքներով ցանկացած ուղղությամբ եւ ընկերությամբ: Փարիզի օդանավակայանում Ձեզ կդիմավորի մեր գրասենյակի ներկայացուցիչը եւ կհոգա Ձեր բոլոր հոգսերը՝

- *Գնացքի տոմսեր Եվրոպայում*
- *Հյուրանոցների ամրագրում Հայաստանում եւ արտասահմանում*
- *Բժշկական ապահովագրություն*

375010, ք. Երեւան, Վարդանանց 10
Հեռ. (374 1) 52 54 48, 52 85 48, ֆաքս (374 1) 56 40 30
E-mail: sabera@arminco.com

Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիան

հայտարարում է ընդունելություն 2001-2002 ուսումնական համար հետեւյալ մասնագիտությունների գծով՝

Գեղանկարչություն

10 տեղ- 5 պետպատվեր (որից 1-ը ժամկետային զինծառայությունից զորացրված), 5 վճարովի (գեղանկարիչ)

Քանդակագործություն

9 տեղ- 4 պետպատվեր, 5 վճարովի (քանդակագործ)

Գծանկարչություն (գրաֆիկա)

10 տեղ- 5 պետպատվեր (որից 1-ը ժամկետային զինծառայությունից զորացրված), 5 վճարովի (նկարիչ-գրաֆիկ)

Կիրառական զարդարվեստ եւ ժողովրդական արհեստներ

11 տեղ- 4 պետպատվեր, 6 վճարովի, 1-ն առանց ժամկետ. զինծառայության արտոնության իրավունքի հետեւյալ մասնագիտությունով՝ խեցեգործ (դեկ. կիր. արվեստի նկարիչ)

Դիզայն

23 տեղ- 9 պետպատվեր (որից 1-ը ժամկետային զինծառայությունից զորացրված), 12 վճարովի, 2 առանց ժամկետ. զինծառայության արտոնության իրավունքի (դիզայներ)

Տեքստիլ եւ թեթեւ արդյունաբերության արտադրանքի գեղարվեստական նախագծում

17 տեղ- 7 պետպատվեր (որից 1-ը ժամկետային զինծառայությունից զորացրված), 8 վճարովի, 2 առանց ժամկետ. զինծառայության արտոնության իրավունքի հետեւյալ մասնագիտություններով՝ հագուստի մոդելավորում (հագուստի մոդելյոր), տեքստիլ արտադրանքի գեղարվեստական ձեւավորում (կտորի գեղարվեստական ձեւավորող)

Կերպարվեստի պատմություն եւ տեսություն

8 տեղ- 2 պետպատվեր, 6 վճարովի (արվեստաբան)

Համակարգչային գեղարվեստական նախագծում

10 տեղ- 2 պետպատվեր, 5 վճարովի, 3 առանց ժամկետ. զինծառայության արտոնության իրավունքի (համակարգչային նկարիչ)

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Գեղանկարչություն

4 տեղ- 1 պետպատվեր, 3 վճարովի (գեղանկարիչ)

Գծանկարչություն (գրաֆիկա)

4 տեղ- 1 պետպատվեր, 3 վճարովի (նկարիչ-գրաֆիկ)

Կիրառական զարդարվեստ եւ ժողովրդական արհեստներ

10 տեղ- 1 պետպատվեր, 7 վճարովի, 2-ն առանց ժամկետ. զինծառայության արտոնության իրավունքի

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Կիրառական զարդարվեստ եւ ժողովրդական արհեստներ

7 տեղ- 0 պետպատվեր, 6 վճարովի, 1-ն առանց ժամկետ. զինծառայության արտոնության իրավունքի, հետեւյալ մասնագիտությամբ՝ գորգարվեստի նկարիչ

Ակադեմիա ընդունվողները քննություն են հանձնում հետեւյալ առարկաներից

1. Գեղանկարչության բաժին (ուսման 6 տարի տեւողությամբ) կոմպոզիցիա, գծանկարչություն, գեղանկարչություն, հայոց լեզու (գրավոր- ոչ մրցութային)
2. Քանդակի բաժին (ուսման 6 տարի տեւողությամբ) կոմպոզիցիա, գծանկարչություն, քանդակագործություն, հայոց լեզու (գրավոր- ոչ մրցութային)
3. Գրաֆիկայի բաժին (ուսման 6 տարի տեւողությամբ) կոմպոզիցիա, գծանկարչություն, գեղանկարչություն, հայոց լեզու (գրավոր- ոչ մրցութային)
4. Կիրառական զարդարվեստ եւ ժողովրդական արհեստներ (ուսման 5 տարի տեւողությամբ) կոմպոզիցիա, գծանկարչություն, գեղանկարչություն կամ քանդակագործություն, հայոց լեզու (գրավոր- ոչ մրցութային)
5. Դիզայնի բաժին (ուսման 5 տարի տեւողությամբ) կոմպոզիցիա, գծանկարչություն, գեղանկարչություն, հայոց լեզու (գրավոր- ոչ մրցութային)
6. Տեքստիլ եւ թեթեւ արտադրանքի գեղարվեստական նախագծում (ուսման 5 տարի տեւողությամբ) կոմպոզիցիա, գծանկարչություն, գեղանկարչություն, հայոց լեզու (գրավոր- ոչ մրցութային)
7. Կերպարվեստի պատմություն եւ տեսություն (ուսման 5 տարի տեւողությամբ) կերպարվեստի պատմություն (գրավոր), ընդհանուր արվեստի պատմություն (բանավոր), հայոց լեզու (գրավոր)
8. Համակարգչային գեղարվեստական նախագծում (ուսման 6 տարի տեւողությամբ) կոմպոզիցիա, գծանկարչություն, գեղանկարչություն, հայոց լեզու (գրավոր- ոչ մրցութային):

Մասնագիտական առարկաներից դրական ստացած միավորների հավասարության դեպքում կերպարվեստի կատարողական առարկաների գծով առաջնությունը տրվում է կոմպոզիցիայի, իսկ արվեստաբանականում՝ ընդհանուր արվեստի պատմությանը, այնուհետեւ՝ ըստ ընդունելության կանոնների:

Գյումրու եւ Դիլիջանի մասնաճյուղերի դիմորդների փաստաթղթերի ընդունումը եւ քննությունների հանձնումը կատարվում է Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայում:

Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնածներին, բուհի կողմից տվյալ մասնագիտության համար առաջադրված պայմաններից անկախ, մրցույթից դուրս, հանրապետական ընդունող հանձնաժողովի որոշմամբ ընդունվում են՝

ա) Առաջին, երկրորդ խմբերի եւ մինչեւ 16 տարեկան մանկուց հաշմանդամները, որոնց համար բժշկական-աշխատանքային փորձաքննական հանձնախմբի եզրակացության համաձայն տվյալ մասնագիտությամբ սովորելը հակացուցված չէ:

բ) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության նախարարության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարությունների տված վկայականների:

Մինչեւ անձնական գործերի ընդունումը դիմորդներն անցնում են նախնական ընտրություն՝ ներկայացնելով իրենց աշխատանքները/քանդակագործական աշխատանքները կարելի է ներկայացնել նաեւ լուսանկարներով:

Քննություն հանձնելու իրավունք ստացած դիմորդները յուրաքանչյուր քննական առարկայի համար ակադեմիայի դրամարկղ են մուծում 1500 դրամ:

Անկախ քննությանը մասնակցելու արդյունքից, վճարված գումարը չի վերադարձվում:

Դիմումները եւ անձնական գործերն ընդունվում են հունիսի 15-ից մինչեւ հուլիսի 15-ը ներառյալ:

Ընդունելության քննությունները կանցկացվեն ս. թ. հուլիսի 21-ից մինչեւ օգոստոսի 16-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 56-06-15, 56-07-86

Հասցեն՝ Բաշինջաղյան 36:

ՌԵԿՏՈՐԱՏ

@rminco Global Telecommunications

Ինտերնետ ծառայություններ «ԻՆՏԵՐՆԵՏ» սրճարանում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունյաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 19. 05. 2001 Գինը՝ 100 դրամ